

Երևանի Կոմիտասի անվան  
 պետական կոնսերվատորիա  
 Yerevan Komitas  
 State Conservatory  
 Ереванская государственная  
 консерватория им.Комитаса

# ԵՐԱԺԻՇ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (218) # 2 փետրվար 2024



**Կոմիտաս  
 Վարդապետի  
 ստեղծագործությունները  
 գրանցվել են  
 ՅՈՒՆԵՍԿՕ-ի  
 Աշխարհի  
 հիշողության  
 միջազգային  
 ռեգիստրում**



Կոմիտասի՝ եռաչափ մոդելավորմամբ  
 ստեղծված վիրտուալ  
 աշխատասենյակը, VR ցուցադրություն  
 Կոմիտասի թանգարան-ինստիտուտում

## Չապլեն Վարդանյանի հիշատակին

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ  
 29/03/2015 19:00  
 Հայաստանի Պետական  
 Կամերային Նվագակցումը  
 Վահան Մարտիրոսյան  
 Մենակատարների  
 Պետական կոնսերվատորիայի  
 Մանդոլին  
 Սիմֆոնիա N4  
 Միևնույն ժամանակ  
 Սիրանուշ Գասպարյան  
 /սոպրանո/




ԿՈՄԻՏԱՍԻ  
 ԹԱՆԳԱՐԱՆ - ԻՆՍՏԻՏՈՒՏ  
 ՀԱՄԵՐԳԸ ԵՎ ԿՈՆԿԵՐՏԸ  
 ՉԱՊԵՆ  
 Մեխակավանի  
 Երգիչը  
 27 մարտին  
 18:00  
 ՓԵՏՐՎԱՐ 3 2024

Գագիկ Խաչատրյանին  
 նվիրված համերգ  
 Կոմիտասի թանգարան-  
 ինստիտուտում



Երաժշտական  
 անցուղարձը ԵՊԿ  
 Գյումրիի  
 մասնաճյուղում

Հասմիկ Հովհաննիսյան, Մարինե Խաչատրյան,  
 Հեղինե Խաչատրյան, Ռիտա Աղայան



«Վիեննայի  
 ֆոլկսօպերայի հեռու  
 ունեմ անժամկետ  
 աշխատանքային  
 պայմանագիր».  
 Ճելիֆա  
 Հարությունյան



Հայ  
 երաժշտությանը  
 նվիրված  
 պանել  
 միջազգային  
 գիտաժողովում

Հարգապարույց  
 երաժշտագետ Տաթևիկ  
 Շախկուլյանի հետ



Տաթևիկ Շախկուլյան



## Կոմիսա Վարդապետի ստեղծագործությունները գրանցվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում

1 ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի միաձայն որոշմամբ Կոմիսա Վարդապետի ստեղծագործությունների հավաքածուն գրանցվել է Աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում: Կոմիսապի թանգարան-ինստիտուտում տեղի է ունեցել «Յագար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշարի «Աշխատանքային երգեր» հատորի շնորհանդեսը, գործարկվել է «Կոմիսապի աշխատանքային» VR ցուցադրությունը: Կոմիսապի թանգարան-ինստիտուտում հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ այս մասին հայտնել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը, Կոմիսապի թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոստանյանը, գիտական բաժնի ղեկավար Տաթևիկ Շախկուլյանը, «Կոմիսապի աշխատանքային» VR նախագծի հեղինակ, թանգարանագետ Մարինե Հարոյանը և «Արդշինբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Արտակ Անանյանը: ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել գործընկերներին և հետազոտական թիմին՝ նշելով. «ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի միաձայն որոշմամբ Կոմիսա Վարդապետի ստեղծագործությունների հավաքածուի՝ Աշխարհի հիշողու-

նշել է, որ ԱԳ նախարարությունը հետևողական է մշակութային ժառանգության միջազգայնացման հարցում: Նրա խոսքով՝ դեռ 2019 թվականին Կոմիսա Վարդապետի 150-ամյակն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակված մարդկանց և կարևոր իրադարձությունների հոբելյանների ցանկում: «Աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում գրանցվում են բացառիկ արժեք ներկայացնող փաստագրական նմուշներ: Այս ծրագրի զլխավոր նպատակն է կանխել աշխարհում գոյություն ունեցող արխիվների և գրադարանների արժեքավոր հավաքածուների կորուստը և նպաստել դրանց արդյունավետ պաշտպանությանը և լայն տարածմանը: Մինչ այդ՝ նշված հեղինակավոր ցանկում իրենց արժանի տեղն են գտել Բյուրականի աստղադիտարանի առաջին հետազոտությունը, Մատենադարանի ձեռագրերի և Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների հավաքածուները: Կոմիսապի ստեղծագործությունների գրանցումը Աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում նախևառաջ տարիների համատեղ աշխատանքի արդյունք է», - ասել է ԱԳ նախարարի տեղակալը: Ըստ Վահան Կոստանյանի՝ Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյա հոբելյանները և ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2024-2025 թթ. Հռչակված մարդկանց և կարևոր իրադարձությունների հո-

տության 50-ական նմուշ՝ յուրաքանչյուր հատորում առանձին ժանրով և բնորոշ նկարներով», - ասել է Տաթևիկ Շախկուլյանը: Որպես թանգարանի ձեռքբերում՝ Նիկոլայ Կոստանյանը նշել է «Կոմիսապի աշխատանքային» VR ցուցադրությունը: «Նախագիծը հնարավորություն է ստեղծում VR ակնոցի միջոցով մուտք գործել Կոմիսա Վարդապետի՝ Կ. Պոլսում գտնվող բնակարանի աշխատանքային: Եռաչափ մոդելավորմամբ ստեղծված վիրտուալ աշխատանքային ինտերիերում ներկայացված են Կոմիսապի ռոյալը և ֆիսհարմոնը, անձնական այլ իրեր: Վիրտուալ շրջայցը հագեցած է ինտերակտիվ բաղադրիչով, ամբողջ ընթացքն ուղեկցվում է Կոմիսապի մասին պատմող տեղեկատվական նյութով, որում հնչում է նաև Կոմիսապի ձայնը: Մոդելավորումը կատարվել է Կոմիսապի սան Արամ Աստվածատրյանի ձեռքով պատրաստված մանրակերտի հիման վրա: Վերջինս երկար տարիներ աշխատել է Բյուրականի աստղադիտարանում: 2019 թ. Կոմպոզիտորների միությունը մանրակերտը փոխանցել է թանգարանին», - ասել է Նիկոլայ Կոստանյանը: ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը կարևորել է այն հանգամանքը, որ VR ցուցադրությունն իրականություն է դարձել մասնավոր ընկերության հետ համագործակցությամբ, այս դեպքում՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի: «Մասնավորի հետ համագործակցությունը ցույց է տալիս համատեղ աշխատանքի արդյունավետությունն ու հեռանկարային բնույթը: Հույս ունենե՛լ այն լավ օրինակ կլինի թե՛ մյուս թանգարանների, թե՛ մասնավոր գործընկերների համար», - ասել է նախարար Ժաննա Անդրեասյանը: Ըստ նրա՝ ժամանակակից տեխնոլոգիաները, մուտք գործելով մշակույթի ոլորտ, նոր հնարավորություններ են ստեղծում նաև թանգարանների համար՝ կենդանի դարձնելով այցը. «Այցելուները նորովի են բացահայտելու Կոմիսապի աշխատանքային, նրա առօրյան մոտիվից ուսումնասիրելու հնարավորություն են ունենալու: Սա հատկապես երեխաների համար անկրկնելի փորձառություն է՝ նրանց գիտելիքը դարձնելով առավել տպավորիչ: Թանգարաններում ինտերակտիվ կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի զուգահեռ ընթացքից մեր երեխաները միայն չափելու են»: «Արդշինբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Արտակ Անանյանի խոսքով՝ «Կոմիսապի աշխատանքային» VR ցուցադրությունը փոքրիկ ներդրում է ոչ միայն հայ, այլև համաշխարհային արժեք ներկայացնող Կոմիսապի ժառանգությունը հանրահռչակելու նպատակով. «Մեզ համար շատ կարևոր է մեր մշակութային արժեքները պահպանելը և հետագա սերունդներին փոխանցելը, և մեր համագործակցությունը կլինի շարունակական»: «Կոմիսապի աշխատանքային» VR նախագծի հեղինակ, թանգարանագետ Մարինե Հարոյանը ներկայացմամբ՝ Կոմիսապի աշխատանքային մանրակերտը ստեղծվել է ոչ միայն նրա սանի՝ Արամ Աստվածատրյանի հիշողությամբ, այլև օգտագործվել են Կոմիսապի ժամանակակիցների՝ հատկապես Աղավնի Մեսրոպյանի հուշերը: Այն մոդելավորված է Կոմիսապի իրերի հիման վրա, որպեսզի որևէ շեղում չլինի: Ասուլիսին ներկա էր նաև Արամ Աստվածատրյանի սանը՝ Հենրիկ Սարգսյանը, որը ևս իր վարպետի հետ որոշակիորեն աշխատել է մանրակերտի ստեղծման շուրջ: Ըստ Հենրիկ Սարգսյանի՝ իր վարպետը մանրակերտը ստեղծել է 1968 թ. և ավարտել 1969 թ.: Ի նշանավորումն Կոմիսապի ծննդյան 100-ամյակի: Ներկայացված է Կոմիսապի՝ Կ. Պոլսի տան աշխատանքային:



Տաթևիկ Շախկուլյան, Նիկոլայ Կոստանյան, Ժաննա Անդրեասյան, Վահան Կոստանյան, Արտակ Անանյան, Մարինե Հարոյան

թյան միջազգային ռեգիստրում գրանցվելու փաստը պետության հետևողական քաղաքականության արդյունք է: Այն տարբեր գերատեսչությունների համակարգմամբ իրականացվող տևական աշխատանք է: Գործընթացի կարևոր մաս է մեծածավալ գիտահետազոտական աշխատանքը, որի ընթացքում հայտը պատշաճ նախապատրաստվում է՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին»: Նախարարի խոսքով թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական ժառանգության հանրահռչակման, հատկապես միջազգային հարթակներում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան ցանկերում գրանցելու նպատակով շարունակական աշխատանքներ են իրականացվում: Նրա տեղեկացմամբ՝ գրանցվել է Գյումրիի դարբնության ավանդույթը՝ որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգություն, մեկնարկել է Տաթևիկ և Տաթևիկ Մեծ անապատ վանական համալիրի, Ռոտտան գետի կիրճի հուշարձանախմբին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գինված հակամարտությունների պայմաններում մշակութային արժեքների պաշտպանության կոմպենցիայի շրջանակում ուժեղացված պաշտպանության կարգավիճակ շնորհելու գործընթացը: Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ պետական բյուջեում առանձին տող է հատկացվել հայտերի պատրաստման համար: Հայտերի ցանկերը, որոնց շուրջ աշխատանքներ են իրականացվելու, արդեն հստակեցված են: ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը, շնորհավորելով կարևոր իրադարձության կապակցությամբ,

բեյլանների օրացույցում: Կոմիսապի թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոստանյանի խոսքով՝ հունվարի 29-ը խորհրդանշական է թանգարանի համար. թանգարանը բացվել է 9 տարի առաջ այս օրը: «Այս տարի նաև Կոմիսապի ծննդյան 155-ամյակն է, որին լայնածավալ ծրագրերով պատրաստվել ենք: Կոմիսապի ստեղծագործությունների հավաքածուի՝ Աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում գրանցվելու փաստը մեզ համար պարտավորեցնող է: Այն թ տարիների հետևողական աշխատանք է՝ ԿԳՄՍ և ԱԳ նախարարությունների և թանգարանի համագործակցությամբ», - ասել է թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոստանյանը: Թանգարանի գիտական բաժնի ղեկավար Տաթևիկ Շախկուլյանն իր հերթին նշել է, որ Կոմիսապի Վարդապետի արվեստի նկատմամբ օտարազգի ուսումնասիրողների մեծ հետաքրքրություն կա, որից էլ բխել է հավաքածուի գրանցման պահանջը: Նա նաև տեղեկացրել է, որ սկսվել է Կոմիսապի ստեղծագործությունների հրատարակությունների նոր շարք, որտեղ կարևոր են միջազգայնացումը և դրանք ավելի հասանելի դարձնելը: Տաթևիկ Շախկուլյանը ներկայացրել է նաև «Յագար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշարի «Աշխատանքային երգեր» հատորը: «Թանգարանը մշտապես կրթական ծրագրեր է իրականացնում, և օտարազգի մասնակիցների հետ լեզվի խնդիր էր առաջանում: Այս բացը լրացնելու համար սկսեցինք հատորների տպագրության շարք: Ներկայացված են հայկական ֆոլկլորային երաժշ-

խագահ Արտակ Անանյանի խոսքով՝ «Կոմիսապի աշխատանքային» VR ցուցադրությունը փոքրիկ ներդրում է ոչ միայն հայ, այլև համաշխարհային արժեք ներկայացնող Կոմիսապի ժառանգությունը հանրահռչակելու նպատակով. «Մեզ համար շատ կարևոր է մեր մշակութային արժեքները պահպանելը և հետագա սերունդներին փոխանցելը, և մեր համագործակցությունը կլինի շարունակական»: «Կոմիսապի աշխատանքային» VR նախագծի հեղինակ, թանգարանագետ Մարինե Հարոյանը ներկայացմամբ՝ Կոմիսապի աշխատանքային մանրակերտը ստեղծվել է ոչ միայն նրա սանի՝ Արամ Աստվածատրյանի հիշողությամբ, այլև օգտագործվել են Կոմիսապի ժամանակակիցների՝ հատկապես Աղավնի Մեսրոպյանի հուշերը: Այն մոդելավորված է Կոմիսապի իրերի հիման վրա, որպեսզի որևէ շեղում չլինի: Ասուլիսին ներկա էր նաև Արամ Աստվածատրյանի սանը՝ Հենրիկ Սարգսյանը, որը ևս իր վարպետի հետ որոշակիորեն աշխատել է մանրակերտի ստեղծման շուրջ: Ըստ Հենրիկ Սարգսյանի՝ իր վարպետը մանրակերտը ստեղծել է 1968 թ. և ավարտել 1969 թ.: Ի նշանավորումն Կոմիսապի ծննդյան 100-ամյակի: Ներկայացված է Կոմիսապի՝ Կ. Պոլսի տան աշխատանքային:

ԿԳՄՍ ՀԱՍՏԱՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՏ  
ՎԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
<https://www.aravot.am/2024/01/29/1396631/>

## Հովհաննես Թումանյանի եվ Կոմիսապի համագործակցության մասին Հովհաննես Թումանյանի ծննդյան 155-ամյակին

Փետրվարի 19-ին լրացավ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 155-ամյա հոբելյանը: Կոմիսապին և Թումանյանին միավորում էր հոգևոր ու ստեղծագործական մտերմությունը: Իշխանուհի Մարիամ Թումանյանի առաջարկով Կոմիսապը նախաձեռնել էր օպերա գրել ըստ Թումանյանի «Անուշ» պոեմի: Ստեղծագործության վրա աշխատանքը սկսվել էր 1904-ին և շարունակվել է հետագա տարիներին, սակայն կոմպոզիտորը

այդպես էլ ավարտին չի հասցրել այս մտահղացումը: Կոմիսապի արխիվում պահվող «Անուշ»-ի ձեռագիր պատառիկների վերլուծության արդյունքում կոմիսասագետ Ռոբերտ Աբայանը փաստում է դրանց ոճական սերտ կապը հայ գեղեցկական, մասամբ նաև քաղաքային, աշուղական և հոգևոր երգարվեստի հետ՝ ընդգծելով, որ այդ նյութերը «մի զարմանալի ամբողջություն, միասնություն են կազմում, և այդ միասնությունը ստեղծողը նրանց բուն ժողովրդական ոգին է»: Ռ. Աբայանի վերականգնմամբ

Կոմիսապի «Անուշ»-ի հատվածները մի քանի անգամ կենդանի կատարմամբ ներկայացվել են 1970-ական թթ.: «Անուշ»-ի վերաբերյալ տեղեկություններ կան Կոմիսապի նամակագրության մեջ, ինչպես նաև հայ մշակույթի երկու մեծերին առնչվող հուշագրական աղբյուրներում: Ներկայացնում ենք Կոմիսապի՝ Թումանյանին ուղղված նամակներից մեկը՝ կրճատումներով:

### Հովհաննես Թումանյանի եվ Կոմիտասի համագործակցության մասին Հովհաննես Թումանյանի ծննդյան 155-ամյակին



«1908. 8 Յունիսի. Ս. Էջմիածին».

Սիրելի Յովհաննես,

Էջմիածին չեկար, մոծակից վախեցար. էդ պիժի մոծակն ի՞նչ է, որ մարդս նորանէն վախենայ, ես քեզ այնպիսի տեղ տայի, որ մոծակ չէ, մոծակի աղբերն իր ճտերով չէր կարող մուտք գործել:

Բան չունեն ասելու: Ուզում ես Դիլիջան, բարի. դաշնամուրի հոգ մի՛ անիր. իմ գալու կամ քո գալուդ նպատակն է լինելու միայն եւ եթե բառերը՝ բանաստեղծութիւնը լրացնել դերակատարներով և երգերով, մի խօսքով՝ կազմել լիբրետթոն: Իսկ միւս բաները՝ երաժշտականը կկազմեն ես միայն Էջմիածնում, ուր իմ սենեակում հարկաւոր յարմարութիւններն էլ կան ինձ համար:

(...) Ես որոշել եմ այս ամառն անցնել Էջմիածնում, բայց մի 10 օրով կը գամ Դիլիջան մի՛նչեւ «Անուշը» լրացնենք: Իշխանուհի Թումանյանին յատկապէս բարևներս յիշիր:

Քեզ, տիկնոջ, ծոխկներդ էլ մի բոլ գնացրով սիրալիր ողջոյններս:

Համըրդներով՝  
քո Կոմիտաս Վարդապետ»:

Նյութը վերցված է [https://www.facebook.com/KomitasStateMuseumInstitute\\_tgh](https://www.facebook.com/KomitasStateMuseumInstitute_tgh)



### Հայ երաժշտությանը նվիրված պանել միզազային գիտաժողովում Հարցազրույց երաժշտագետ Տարեւիկ Շախուրյանի հետ



Ուղղւյն, Տարեւիկ, շնորհավորում եմ վերջերս Կանադայում կայացած էթնոէրաժշտագիտական միջազգային համաժողովում ձեր ելույթի և հատկապէս հայ երաժշտությանը նվիրված առանձին պանելը նախագահելու առթիւ: Չեմ քերտ ամենակարգից. Ինչպէ՞ս կայացավ երաժշտի, մասնավորապէս երաժշտագետի և խմբավարի ձեր ժամանակահատվածը:

Իրականում երաժշտի ուղին ընտրելու նպատակ չեմ ունեցել: Շատ պատահաբար մի համերգի ժամանակ ինձ լսեցին մասնագետներ՝ այդ թվում Հովհաննես Չեքիջյանը, Արամ Սաթյանը, լուսահոգի Ստեփան Լուսինյանը, որ այդ ժամանակ մշակույթի փոխնախարարն էր, և դա Ավազբերդի երաժշտական դպրոցի իմ վերջին ավարտական համերգը պիտի լիներ որպէս դաշնակահար: Սակայն, համերգից հետո իրենք փնտրեցին իմ ծնողներին, որպէսզի խորհուրդ տան անպայման ինձ դառնալ երաժիշտ: Այդպէս ես հայտնվեցի Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանում, դաշնամուրի բաժնում: Սակայն, իմ Ավազբերդու դասատուն մի քանի ամիս հետո ինձ լսման տարազ էր ուղարկեց Փաշինյանի մոտ. վերջինս ասաց, որ պետք է արագ տեղափոխվեմ տեսական բաժնի: Այդպէս, կարելի է ասել, իր ձեռքի տակ եմ մեծացել այդ տարիներին, այնուհետև ընդունվել Երևանի Կոմիտասի անվ. պետական կոմպոզիտորի երաժշտագիտության բաժնի: Իսկ ինչո՞ւ նաև խմբավարություն, որովհետև պատահաբար մի հաղորդման մեջ լսելով «Հովեր» երգչախմբի ելույթը՝ ուղղակի սիրահարվեցի այդ ոլորտին: Նախկինում որևէ հետաքրքրություն չեմ ունեցել խմբավարության հանդեպ, բայց ընտրեցի նաև այս մասնագիտությունը: Այսինքն՝ կյանքն է բերել, ես չեմ ընտրել:

Վերջերս, մասնակցել էք Կանադայում տեղի ունեցող էթնոէրաժշտագիտական միջազգային կենտրոնի համաժողովին: Ինչպէ՞ս կայացավ ձեր մասնակցությունը և ի՞նչ տեսլականով որոշեցիք մասնակցել:

Դա միջազգային էթնոէրաժշտագիտության կենտրոնն է, հիմնված ԱՄՆ-ում, հանդիպումները տեղի են ունենում ԱՄՆ-ի տարբեր նահանգներում, այս անգամ Կանադայում էր հյուրընկալել միջոցառումը, ներգրավված էին կանադական երեք համալսարաններ: Իրենք բաց հրավեր էին դրել մասնակցության, և ես լրացրեցի հայտը՝ իրենց տեղեկացնելով, որ կարող եմ ներկայացնել հայ երաժշտության վերաբերյալ նյութ, մասնավորապէս՝ Էպոսի մասին երգերը: Առաջարկս ընդունվեց և ինձ հրավիրեցին: Իրականում շատ քիչ ժամանակ էր մնում, ընդամենը երկու ամիս, և ես կարծում էի, որ իրատեսական չէ հասցնել գնալ, սակայն իրենք օժանդակեցին ամեն ինչով և, ի գարնանին ինձ, օրերից մի օր գրեցին ինձ, որ ուզում են ունենալ նաև հայ երաժշտությանը նվիրված առանձին պանել՝ առաջարկելով լինել այդ պանելի նախագահը:

Ինձ մոտ սկզբում հարց օձագեց. ինչպէ՞ս իրենք վստահեցին ինձ նման բան, բայց երկու համաձայնեք եմ նկատում. մեկն ամերիկյան ամերիկացու թուրքալու է, որ բոլոր պայմանները ստեղծում են, որ մասնագետն իրեն լավ զգա, իսկ մյուս կողմից էլ, կարծում եմ, իրենք էլ ունեն իրենց ճանապարհները՝ ուսումնասիրելու, թե ինչ մասնագետ եմ հրավիրում: Հավանաբար տեսել, կարդացել էին կենսագրական իմ տվյալները, որոնք հասանելի են տարբեր հարթակներում: Այսպէս ստացվեց իմ մասնակցությունն այս համաշխարհային իրադարձությանը, որտեղ ներկայացված էին թե՛ ամերիկյան թե՛, թե՛ այլ երկրներ՝ Մեծ Բրիտանիա, Գերմանիա և այլն:

Ի՞նչ հարցեր բարձրացվեցին հայ երաժշտությանը նվիրված պանելում, ի՞նչ քննարկումներ եղան և ինչ կառանձնացրեք ձեզ համար, որ քաղցրեք այդ քննարկումից:

Ոչ միայն այս միջոցառմանը, այլև մյուս բոլոր երաժշտագիտական հանդիպումներին իմ նպատակը լինում է ապահովել հայ երաժշտության հասանելիությունը: Իրականում մեզ թվում է, թե հայ երաժշտության մասին շատ ինքնուրույն չափով չէ կազմում: Ինչպէ՞ս են մարդիկ իմանում հայ երաժշտության մասին. հիմնականում կամ որևէ համերգի, միջոցառման ժամանակ են լսում, կամ ունեն հայ ընկերներ (հիմնականում արտերկրում ապրող հայեր), մի զգալի մաս էլ ընդհանրապէս հայ բառը չգիտի, Արմենիա անունն իրեն ոչինչ չի ասում, և երբ որ պանել է ներկայացվում, որի վերնագրում արտագրված է Արմենիա բառը, անտեղյակներին սա շատ է զրպարում գնան, տեսնեն ի՞նչ է և ինքնուրույն ձեռք բերեն: Այս դեպքում մեզ համար պանել ունենալը շատ շահեկան էր. այսինքն, ոչ միայն ունենալ մի դասախոսություն ամբողջ գիտաժողովի մեջ, այլ մի ամբողջ պանել հայ երաժշտության մասին:

Պանելի շրջանակներում հնչել են դասախոսություններ, մեկը՝ մեր էպոսի, մյուսը՝ Կոմիտասի «Կռունկի» վերաբերյալ: Բայց հարցերը մեզ տարան շատ տարբեր տեղեր. սկսել ենք նույնիսկ պարզաբանումից, թե որտե՞ղ է Հայաստանը, ի՞նչ է նշանակում Հայաստան, ստիպված ենք եղել Սովետական Միությունում էլ ակնարկել, հայոց պատմության մասին էլ շեշտել, Սփյուռքի գոյացման պատճառներից խոսել, այսինքն, նախ խնդիր ենք ունեցել ցույց տալու՝ ի՞նչ է նշանակում հայ և Հայաստան: Խոսել ենք նաև լեզվի և երաժշտության ճյուղերի մասին, հետո միայն անդադարով դասախոսություններին: Հարցերը մեծամասամբ առնչվում էին Կոմիտասին, և շատ տարբեր դիտարկումներին: Նաև հարց էր առաջանում, թե ո՞րն է մեր մերօրյա երաժշտությունը. քանի որ մենք խոսում ենք ավանդականից, բայց մարդկանց հետաքրքրում է նաև այսօրվանը: Հասկանալի է, որ երբեմն մենք այստեղ ոչ շահեկան դիրքերում ենք հայտնվում, որովհետև մենք ներսում մեզ լավ գիտենք, բայց դրսից երբ մասնագետը գալիս է Հայաստան ուսումնասիրելու հայ երաժշտություն, առնչվում է նաև ռաբիտին: Պատկերացրեք, որ կա հետազոտություն 6/8 տեմպի մասին և այդ տեմպին էլ շրջանառության մեջ է մտել որպէս հայ երաժշտության մի մաս:

Ստիպված ենք եղել խոսել թե՛ գլոբալիզացված աշխարհի ու նաև այն մասին, որ ավանդական երգերն այժմ էլ մեծ դեր ունեն, որ դրանք բեն են բարձրանում, շրջանառվում են կոմպոզիտորական արվեստում և այլն: Մյուս կողմից էլ տեղյակ մարդիկ շատ են հարցնում Կոմիտասի կյանքի մասին. ովքեր գիտեն հայերի մասին, գիտեն նաև եղեռնի իրողության մասին: Տեղյակ մարդիկ հիմնականում հարցնում էին քաղաքական իրողությունների, Կոմիտասի հիվանդության, կյանքի վերջին փուլի մասին և այլն:

Բոլոր դեպքերում մի հետաքրքրական բան կառանձնացնեն, որ ոչ այս գիտաժողովին, այլ ուրիշ առիթներով նկատել եմ. օտար ունկնդրի համար սովորաբար ընկալելի է, որ հայ երաժշտությունը Արևմուտք չի, Արևելք էլ չի, այլ մեջքն է և բոլորովին այլ բան է, և ասողները սովորաբար դա ասում են՝ առանց տեղյակ լինելու Կոմիտասի տեսակետին, որ «մեր երաժշտությունը արևմտյան չէ, արևելյան չէ»:

Օրինակ, մի այսպիսի փորձ եմ ունեցել, Ավստրիայում միջազգային լսարանում Նարեկացու «Հավուն, հավուն» էի միացրել, իհարկե, նախապես խոսելով դրա մասին, այսինքն, խոսակցությունս ընդհանուր հայ միջնադարյան երաժշտության մասին էր և հետաքրքրական արձագանք եղավ: Իրենք ասացին Կոմիտասի բաները, որ սա Արևելք չի, Պարսկաստան չի, Հնդկաստան չի, բայց նաև մենք չենք, Իտալիան չի, Գերմանիան չի և այլն: Այսինքն, այս ընկալումը իրականում կա:

Ի՞նչ կառանձնացնեն ինձ համար. որբորդ անգամ ես հասկացա, որ մարդկանց երաժշտագիտությունը չի հետաքրքրողը, այլ քաղաքական, անտրոպոլոգիական իրողությունները, պատճառաբանությունը, թե ինչո՞ւ է այսինչ բանը այսպէս և այլն: Հայաստանյան երաժշտագիտության

մեջ այս բոլոր հարցերը քննարկվում են, բայց բուն երաժշտությունը ամենամեծ տոկոսն է, որ քննարկվում է տեսական, պատմական առումներով: Արևմուտքում վերաբերմունքը փոքր-ինչ այլ է. քաղաքական համատեքստը ամենահրապուրիչն է իրենց համար: Օրինակ, երբ որևէ ակնարկ է լինում ուկրաինական, կամ իսրայելա-պաղեստինյան հարցին, կտրուկ ակտիվություն է նկատվում: Հիմա, մեր պարագայում, երբ մենք փորձում ենք շրջանցել ոչ մեր ոլորտին վերաբերող իրողություններ՝ թողնելով դա համապատասխան մասնագետներին, արի ու տես, որ երաժշտագիտության աշխարհում հենց այս հարցերն են ուզում քննարկել, և դա միայն մեր պարագայում չէ, այլ համաշխարհային առումով: Մի տեսակ այս անգամ ավելի սուր զգացի այս վերաբերմունքը:

Իրականում միջազգային գիտաժողովներն իրար բավական մեծ են, նույնն է համակարգը, տարբեր երկրներից մասնագետները հանդիպում են, քննարկում են դրված խնդիրները: Միջազգային ընկերությունների խնդիրներն ինքնին տարբերվում են, և վերջին տարիներին ես բաց չեմ թողնել օրինակ, միջազգային երաժշտագիտական ընկերության որևէ միջոցառում. վերջինը Աթենքում էր, դրանից առաջ՝ Տոկիոյում, Ցյուրիխում, Հռոմում և այլն: Այս կազմակերպությունը երաժշտագիտությանը նայում է ընդհանուր հայացքով. ամեն ինչ մտնում է այստեղ՝ դասական, միջնադարյան, այսինքն՝ լայն ընդգրկումով: Բայց ամեն տարի բոլոր հարցերը դիտարկում են որոշակի շեշտադրմամբ: Մի տարի թեման տրամագիծն էր, բոլոր առումներով, որը կարելի էր պրոբլեմալ ցանկացած իրողության վրա:

Մյուս կազմակերպությունը, որտեղ ակտիվորեն մասնակցում են, ավանդական երաժշտության միջազգային խորհուրդն է, որի հայաստանյան պատվիրակն եմ և մասնակցել եմ միայն մեկ գիտաժողովին: Այստեղ շեշտը դրված է հիմնականում ավանդական երաժշտության և պարի վրա: Իսկ այս մեկը՝ էթնոէրաժշտագիտության ընկերությունը, ուսումնասիրում է խնդիրներ, որոնք Արևմուտքին չեն պատկանում: Էթնոէրաժշտագիտական բառը մեզանում կարող է այլ իմաստ ունենալ, բայց աշխարհում նշանակում է «ոչ արևմտյան»: Սա գիտություն է, որ ուսումնասիրում է մարդկանց, որոնք ստեղծում են երաժշտություն:

Այս կազմակերպությունների խնդիրները տարբեր են. մի կողմից մեծ են, որովհետև երաժշտագետներն ընդհանուր ճանապարհ են անցնում, բայց թեմատիկան, առաջադրած խնդիրները տարբեր են:

Այս մեկն, իհարկե, առանձնացավ հենց հայ երաժշտության մասին պանելով, որը վերնագրի մեջ իսկ կրում էր «հայ» բառը:

Իսկ ինչպէ՞ս կզննատեք հայ արդի երաժշտագիտության ներկայիս փուլը, ի՞նչ խնդիրներ, գուցե ցանկություններ կառանձնացնեք:

Հայ երաժշտագիտության արդի փուլում կան շատ որակյալ մասնագետներ, որոնք զբաղվում են ամենատարբեր ճյուղերի ուսումնասիրությամբ: Մենք գիտենք, որ և՛ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, և՛ կոմպոզիտորիայի տարբեր տեսության, պատմության և ֆոլկլորագիտության ամբիոնները, անդրադառնում են հայ երաժշտությանը: Կավելացնեն նաև Կոմիտասի թանգարան-ինստիտուտի երաժշտագիտական բաժինը, որը ևս ակտիվորեն զբաղվում է երաժշտության ուսումնասիրությամբ: Այսինքն, մասնագետների պակաս չունենք և շատ հետաքրքրական ու տարբեր թեմաներ են քննարկվում. մի բանից ենք մի քիչ հետ մնում, ոչ, բավական ենք հետ մնում աշխարհին ներկայանալն է: Հավանաբար, խնդիրը լեզվական խոչընդոտն է, ավելի շատ են կոմպոզիտորները ռուսախոս աշխարհի հետ հասկանալի պատճառներով: Այնուամենայնիվ, միջազգային գիտաժողովներին ակտիվորեն մասնակցում են երաժշտագետներ Լիլիթ Երնջալյանը, Աննա Ասատրյանը, Միկո Նավոյանն է հաճախ հանդես



### ՀԱՌԱՉՈՒՆՔ

Աստված Իմ և Արարիչ իմ  
 Ինչու այսպես անմշակ կավի նման  
 ճզմում ես ինձ Քո ափերի մեջ  
 Ե՛ք այդ ինչ հրաշք եմ ես ,  
 որ արժանի եմ այսպես ձևագատման :  
 Մի՞թե կարելի է , որ մարդ էսպես թաց լինի  
 Ե՛ք ցեխոտ և լայրձուն,  
 Մ՞իթե կարելի է ճմռվել այսքան և պտտվել  
 Գլխապտույտ առաջացնող այս փորձառություններում:  
 Սրանք ինձ մաշում են և լրդոում  
 Քո արարչական Նախախնամ մատներին:  
 Ես՝ որբս, արժանի եմ արդյոք որմանալ Քո ստեղծագործ  
 ափերում ,  
 ինչպես Տիեզերական Արվեստի մի Գլուխգործոց ...

Արարիչ իմ և Տեր իմ  
 ինչ է իմ կյանքը, եթե ոչ գինետուն, թմրադեղ և  
 ինքնամահության անկախություն:  
 Ապա Դու ես Միայն Ով Ամենագո,  
 Որ Լիրապես լցնում ես Դոգին իմ  
 Քո Դավիթենական Շնայլ Պարզանքով  
 Եվ Կյանք ընձեռում Ինձ մահասերիս,  
 Որ Փորձանքն եմ գնում հոժարական  
 Դժգոհելով երանելի անապատից,  
 Փորձություններից, Որ Վեր եմ Իմ մեղքերից  
 բազմաբովանդակ ու զագրաշարժ  
 ես՝ բողոքավորս, հիմարաբար խաբս տալով անկնալում  
 եմ Օրհնություններդ Ով Բարերար, որ անխնամ թափվում է  
 համայն երկնականարից ցած ...

Եվ սա է ահա, պատերազմն Առաքելի Նախանշած,  
 Որ Եկել էր և մնում է Ու դեռ Պիտ մնա:  
 Պիտ Մեղքից էլ ծանր Կտրի մեր շունչը,  
 Պիտ Թշնամուց էլ ծարար Դեղա մեր արյունը,  
 Պիտ ծուլությունը սպանի աղոթքը

Ու ծանծուրդ կարծրացնի ոսկրածուծը:  
 Պիտ սրտերն անսեր փնտրեն Քո Լույսը  
 Իրենց իսկ Ընտրած խավարի մթում,  
 Եվ մահը կգա,բայց այլևս չմեռցնելու  
 Քանզի մեռած է այն մարդուս Դոգին  
 Ով Սրտում Օծյալ Դիտուսին չուներ:

Սակայն այս կռվում մահը չի գալու. մահվան տենչանքից  
 են մարդիկ մեռնելու:  
 Մեր Մարտիկները կույրեր են Ով Տեր,  
 Բաց աչքերը Դրանց, և նոր թող կռվեն.  
 Քանզի Կռվում են իրենք իրենց դեմ և  
 միայն իրենց անձերն են Չարաչար Չարչարում:

Բաց արա Ով Դոգիդ Սուրբդ Դոր Ամենախնամ  
 Թող Տեսնեն Օդում Թափառող այս Վիշապներին  
 Որոնց Բերանի խոսքից Դոգու Փտությունն է առաջանում  
 Եւ լեզուներից Դայնություններ են դուրս թափվում:  
 Սրանց չարասիրությամբ լցված աչքերի  
 արտացոլաքն է ճառագայթում մարդուս մարմնի լույսի  
 միջին:  
 Գայթակղությամբ են շողում աչքերը Դրանց  
 Եվ կրքատենչությամբ են Ողողված Ներքինները  
 մարդկանց:

Ահա այս աշխարհի իշխանները Ձեռք են մեկնում  
 Պղծակրոնությանը,  
 իրենց գահերն ու թիկները Մեկ առ մեկ նվիրաբերում են  
 նեռատիրության գալիքին,  
 Որ Եկել էր Ե՛ք Կա Ե՛ք դեռ Կմնա...  
 Դրանք է, որ պահում է Կայսերական Դարպասները,  
 Սակայն Ահա Սա մի պատերազմ է  
 Որտեղ Դրանք անգամ պետք չունի:  
 Պիտի Դոգովդ առնես ու ծախես,  
 Պիտի Սրտիդ բարբախներն ամենը նվիրաբերես,  
 Պիտի Ծնչիդ դավաճան դուրս գաս,  
 Բայց Միայն Ե՛կ Ստրուկ ու իքնապաշտ

Քեզ մնա, Քեզ պատկանի, որ Դիտրտաս Դիվահար քո  
 մեծամտությամբ անձնապաշտդ:

Ուստի Կատարյալդ Մարդ-Որդի  
 Քո Օրինակության Բացառիկությունը ծրագրիր մեր  
 գլխում,  
 Քո Դայրասիրության Նվիրումդ Դիր մեր հավատքում,  
 Քո չարահաղթ Դոգիովդ մեզ դաստիարակիր,  
 Քո Փրկչարար Արյունովդ մեզ խաչիր ու  
 Սպանիր:  
 Մեր Անձերն ու հոգիները գնիր ու Զինիր մեզ Լույսով:  
 Միայն թե Արագացրու Օծյալդ Դիտուս  
 Քանզի Կորչում են գառներդ անմեղ, անզրագիր,  
 անխոսքիմաց և տարակուսյալ:  
 Տար Քո փարախը Քեզ հավատացողին  
 Եվ Բազմիր Գահիդ Դատավոր:  
 Միայն թե հասցրու Տեր Իմ  
 Քանզի Մտենում է Մայրամուտը, ու արևն այլևս լույս չի  
 տալիս:  
 Խաղաղեցրու Տագնապս, Կանոնակարգիր շունչս:  
 Գիշերիս Մեջ Թող որովայնիս Լույսը: Ճանապարհ  
 Նշմարիր մոլորյալիս ուղիներում,  
 Ու Թող Արարչաշունչ խոսքերդ Դաց լինեն Քաղցամահիս  
 համար:

Աշխարհն ու Երկիրը չորս ծայրերից  
 Ազդարարում են Քո Փառահեղ մուտքը  
 Արի Տեր, Արի և Դրամայիր, Ու Կնդվենք  
 Դեպի Վրեժը Խոստումնապահ Մեր Դոր,  
 Որին Վայել է Փառք, Կարողություն Եւ Զորություն  
 Դավիտյանս Դավիտենից Ամեն:

ԱՐԱՄ ՎԱՐՈՒՆՅԱՆ  
 Արմավիրի արվեստի պետական թուղթի  
 երաժշտության տեսության բաժնի 1-ին կուրս

## Հայ երաժշտությանը նվիրված պանել միզազային գիսաժողովում Հարցազրույց երաժշտագետ Տարեհիկ Շախուլյանի հետ

3 Գալիս տարբեր դասախոսություններով: Մեզ թվում է, թե այս բոլորը զգալի քանակ է, բայց որպեսզի մեզ շատ խորքային իմանան, պետք է քառակի աշխատանք տանել:

- Ի՞նչ գործունեություն է այժմ ծավալում Կոմիտասի թանգարան-ինստիտուտի՝ ձեր ղեկավարած գիտական բաժնի:

- Դասախոսությամբ սեսն, որ Կոմիտասի թանգարան-ինստիտուտում ընդգրկված են բացառիկ մասնագետներ, ընդ որում՝ բոլորը երիտասարդներ են: Մասնագիտական որակներով շատ բարձր են և մի տեսակ անմրցելի: Գիտական հետաքրքրության շրջանակը, հասկանալի է, Կոմիտասն է, նաև այն ուղղությունները, որտեղ Կոմիտասն աշխատել է. միջնադարագիտությունը, որի շատ կարևոր, առանձնահատուկ դիրքերում գտնվող մերկայացուցիչ է Կոմիտասը, ֆոլկլորային երաժշտությունը, էլի հասկանալի պատճառներով, որովհետև Կոմիտասն է դրել մեր ֆոլկլորագիտության հիմքերը, մյուս կողմից էլ կոմպոզիտորական արվեստը, որի մերկայացուցիչն էր նաև Կոմիտասը, որպես ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր: Նա առաջադրել է այնպիսի միջոցներ, որոնք ցույց են տալիս՝ ինչպիսիս պետք է լինի հայ երաժշտությունը և ինչպես պետք է առանձնանա համայն աշխարհից: Եվ դա նա կատարել է պատվով, իհարկե: Այսինքն, Կոմիտասի գործունեության բոլոր ուղղությունները մեր հետազոտական հետաքրքրության դաշտում են:

Մյուս կողմից էլ մենք համագործակցում ենք արտասահմանյան այնպիսի գործընկերների հետ, որոնց գիտական հետաքրքրությունը ոչ թե հայ երաժշտությունն է, այլ նշածս այս բոլոր ուղղությունները՝ ֆոլկլոր, միջնադար, կոմպոզիտորական արվեստ: Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրքը, որի ութերորդ հատորն արդեն ունենք, ընդգրկում է հողվածներ թե՛ հայաստանյան, թե՛ միջազգային գործընկերներից, և արձարծում է ոչ միայն Կոմիտաս, այլ նրա գործունեության բոլոր ուղղություններին առնչվող թեմաները:

Շատ կարևորում ենք հրատարակումները, այսինքն՝ հանրամատչելի դարձնել կոմիտասյան և հայ երաժշտությունը, ունենում ենք պարտադիր անգլերեն թարգմանություններ և միջազգային տառադարձման համակարգ. Դյուրբանի համակարգն ենք կիրառում, որպեսզի ոչ հայ ընթերցողը կարողանա օգտվել և կատարել մեր ժառանգությունը: Իրականում, պատահական չէ, որ այսպիսի գործունեություն ենք սկսել, թանգարանի բացման առաջին օրից կրթական ծրագրեր ենք միշտ իրականացրել և կրթական ծրագրերին հաճախ մասնակցելու են եկել ոչ հայեր, որոնք չեն կարողանում հայերեն կարդալ: Եվ սա մեզ համար սկզբունքային է եղել՝ մատչելի դարձնել այս մարդկանց համար այդ ամեն ինչը: Դաճախ, հատկապես Կոմիտասի ծննդյան 150-ամյակին ընդառաջ և դրանից հետո, մեզ դիմում են կա-

րողներ, անհատներ, որոնք խնդրում են կոմիտասյան այսինչ տեքստը թարգմանել կամ տառադարձել, որ կարողանան երգել: Եվ այս նպատակով էլ իրականացնում ենք այսպիսի աշխատանք, այս ամենը մատչելի դարձնել ինչպես հայ, այնպես էլ ոչ հայ օգտատերերի համար:

Դուք դասավանդում եք նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Խոսենք ներկայիս ուսանողության մասին. ինչպե՞ս կրթությունը երիտասարդ սերունդին:

- Կոնսերվատորիայում դասավանդելն էլ բոլորովին այլ աշխարհ է ինձ համար. առհասարակ դասավանդումը շատ իմն է և ոչ մի կերպ չեմ կհիտում այն կարծիքը, որ ուսանողների որակն ընկել է: Մի կողմից, այո, կան անհաջող ուսանողներ, որոնց հետ դժվար է ճանապարհ անցնել, բայց դա մեծ տոկոս չի կազմում: Ունեն վոկալ կուրս, որի հետ աշխատանքն ուղղակի վայելում են, այն դեպքում, երբ առարկան բարդ է: Այսինքն, դասավանդման ուղղումն ինձ ցույց է տալիս, որ շատ լավ սերունդ ունենք, իսկ այն, որ թույլ ուսանողներ են լինում, գուցե անխուսափելի է: Թերևս մեր ընտրության սկզբունքը պիտի ավելի խիստ լինի, բայց այն, որ կա հսկա սերունդ, որ լավ արդյունք է տալիս, ձգտում է, այսպես մի տեսակ համազայտ են, քանի որ տեսնում են՝ լինելու է շարունակականություն, այս որակի դեպքում լինելու է:

Կոնսերվատորիայից դուրս էլ դասավանդում են Իրական դպրոցում, որն ավագ դպրոց է, և թողարկում են ծրագրավորողների, այսինքն, բոլորովին այլ ուղղությամբ մասնագետներ է տալիս, որոնք արվեստ են անցնում նաև, ես վարում են երաժշտության մասը: Եվ նորից շատ հետաքրքրական արդյունքներ ենք արձանագրում: Պատկերացրեք, որ այդ ուղղությամբ ուսանողը հայկական նոտագրության է տիրապետում այնպես, որ արդեն գրքի հրատարակության գնա: Այսինքն, երբ խոսում ենք երիտասարդ սերունդի մասին, այստեղ գովելի արդյունքներ են տեսնում, ինչպես երաժիշտների, այնպես էլ ոչ երաժշտական բնագավառում: Եթե ճիշտ ճանապարհով շարժվենք, վստահաբար լավ արդյունքներ ունենալու ենք հետագայում:

Երկու մասնագիտություն ունենք՝ երաժշտագետ և խմբավար: Ինչպե՞ս եք համատեղում այս երկուսը և օգնում է մեկը մյուսին:

- Երկու մասնագիտություններս միմյանց շատ են օգնում: Մի տեսակ չեն պատկերացնում, որ լինելի միայն մեկը կամ մյուսը: Դաստատ շատ թերի կլինեն, որովհետև որպես խմբավար՝ դու բոլորովին այլ մակարդակով ես կարողանում նայել ստեղծագործությանը, հատկապես վերլուծական առումով, և որպես երաժշտագետ եթե կատարող չլինես՝ շատ թերի ես: Սովորաբար երաժշտագետները բոլորն էլ կատարող են լինում հիմնականում՝ դաշնակահար կամ այլ, բայց խմբավարի, դիրիժորի հայացքով երաժշտությանը

նր նայելը թե՛ հմտություն է, թե՛ ճիշտն ասած, երջանկություն: Ես այն կարծիքին եմ, որ երբ մարդը ունի տարբեր մասնագիտություններ, դրանք միշտ օգնում են միմյանց: Ես կառաջարկեի Կոմիտասի դեպքն էլ հիշեմք, նա և՛ հոգևորական էր, և՛ երաժիշտ, և ինչպես էին փոխադարձաբար լրացնում այս երկու «մասնագիտությունները» միմյանց: Եթե նա հոգևորական չլիներ, հոգևոր երաժշտության ուղղությամբ կատարած աշխատանքը էլի՛ կլիներ բարձր մակարդակի, բայց ոչ այնպիսին, ինչպիսին որ կա: Որովհետև յուրաքանչյուր խոսքին, ֆրազին նրա վերաբերմունքի մեջ մենք տեսնում ենք հոգևորական լինելու համազայնություն: Եվ մույնը վերաբերում է նաև այլ դեպքերին, երբ մարդն ունենում է խիստ տարբերվող մասնագիտություններ:

Ասեմ, որ մի տեսակ տեսնում են անհրաժեշտություն, որ ոչ միայն երաժիշտները, այլև բոլոր հայերը հասկանան և պատկերացնեն, որ ի դեմս երաժշտության ունեն շատ մեծ գանձ: Երբ խոսում ենք հայ մշակույթի մասին, իսկապես մենք հարուստ ենք թե՛ լեզվով, թե՛ ճարտարապետությամբ, մանրանկարչությամբ, և այս բոլորի կողքին երաժշտությունը բոլորովին այլ մակարդակում է, և սա շատ հետաքրքրական իրողություն է: Ես կուզեմ նկատենք մի բան, որ մեր երաժշտությունը, մասնավորապես հոգևորը, շատ լուրջ հիմքեր է ունեցել: Երբ քրիստոնյա ենք դարձել և խնդիր է դրվել հոգևոր երաժշտությունը հայերենացնելու, մեր եկեղեցու հայրերը շատ հմարմիտ են գտնվել. նրանք աստվածաշնչյան տեքստերին, սաղմոսներին կցել են առանձին երգեր, որոնց խոսքերն իրենք են հորինել, իսկ երաժշտական բաղադրիչով օգտվել են ժողովրդական երաժշտությունից: Սա ես չեմ ասում, սա Կոմիտասի թեզն է, փայլուն ասպարեզված, և արդյունքը եղել է այն, որ մեր հոգևոր երաժշտությունն աշխարհի մասշտաբով խիստ տարբերվող, առանձնացող է: Ես կուզեմ մենք դրա գնահատողն ու իրական կրողը դառնանք, շատ քիչ է միայն վերաբերմունքը, ամեն հայ պետք է գիտակցի սա: Կուզեմ գիտակցենք, որ շատ են հայ երաժշտության ձեռքբերումները նաև կոմպոզիտորական արվեստում, նաև հատկապես կատարողական արվեստում, այսինքն, մենք շատ հարուստ ենք այս առումով, և կարիք կա նաև դրա տերը լինելու: Դասառակ դեպքում՝ արդյո՞ք իրավունք կունենանք դիտարկումներ անելու մեր կորուստների մասին...

ԱՆՆԱ ԱՐԱՄՅԱՆ  
<https://azg.am/culture/%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a5%d6%80%d5%a1%d5%aa%d5%b7%d5%bf%d5%b8-%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a8->

## Մեխակավանի երգիչը՝ Գագիկ Խաչատրյանին նվիրված համերգ Կոմիտասի թանգարան-ինստիտուտում

1 44-օրյա պատերազմում զոհված Գագիկ Խաչատրյանի տարերքը երաժշտությունն էր: Սիրուն էր կատարել հատկապես Կոմիտասի ստեղծագործությունները: Վերջին անգամ նրա երգերը հնչել են Մեխակավանի (Ջաբրայիլ) եկեղեցում: Գագիկի ծննդյան օրվա առթիվ հարազատ կոմսերվատորիայի դասախոսներն ու ուսանողները հուշ - երեկո են կազմակերպել:

Գագիկը սիրում էր երգել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի համերգասրահի բեմից: Նրա հորբնի, մասնագիտությունը, կյանքի շարժիչ ուժը երաժշտությունն ու բեմն էր: Ավարտել էր երգի պետական բատրոնին կից դպրոց-ստուդիայի վոկալ բաժինը, այնուհետև՝ Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության բաժինը: Նաև դերասան էր, խաղում էր Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Արդեն 3 տարի Գագիկի ծննդյան օրը նրա ընտանիքը, ընկերները, դասախոսները Կոմիտասի թանգարան-ինստիտուտում են հավաքվում: Այս տարի Գագիկ Խաչատրյանը կդառնար 27 տարեկան. «1997 թվականի առավոտյան այս օրը՝ ժամը 7-ին, երբ ծնվեց, առատ ծյուն տեղաց երևանում, և այսօր, երբ արթնացա ու տեսա, որ ծյուն է գալիս, իր ներկայությունը միանգամից զգացի: Ինքը իր ծնունդը շատ էր սիրում, մի տեղ նշում էր, թե ինչքան է մնացել: Հավաքում էր իր բոլոր ընկերներին»:



Երբորից 5 տարով փոքր Լիանան իր ծննդյան օրը այնքան չի սիրում, որքան եղբայրն էր սիրում իրեն: Լիանան հիշում է. բոլոր տարեդարձները ստացվել են Գագիկի անակնկալների շնորհիվ: 2019-ին բանակ գորակոչվելուց հետո էլ շարունակել է բոլոր հնարավոր առիթներով ուրախացնել ընտանիքին, ընկերներին: Նա մարդ-տոն էր, - ասում է քույրը: «Ջաբրայիլում 2020-ի տարեմուտի տոնածառն ինքն է գարդարել և լույսերը վառել, այսինքն, անգամ Ջաբրայիլում, որ շատ հեռու ամսադրաբանակ տեղ էր, փորձում էր ինչ-որ մի լույս, ուրախություն վառել», - պատմում է քույրը:

Հրապարակումներից մեկում Գագիկը գրել է՝ «Սիրում եմ Մեխակավանի աշունը: Բնությունն այստեղ ներկվում է գույնզգույն... Դե՛, բնությունն ասվածը մի քիչ ուռճացված է... Ծառերը... Դե՛, ծառեր ասվածը մի քիչ ուռճացված է... Ծառը... Դե... Եսիմ, է... Թռչուններին ի՞նչն է ստիպել Մեխակավանում բնակվել...»:

Ծառայակից Սերգեյ Բախշյանը պատմում է. «Գագիկը միակն էր, որ սիրում էր Մեխակավանի ամապատ հիշեցնող բնությունն ու երկար խոտում հեռվում երևացող լեռների մասին, նույնիսկ այստեղ Գագիկը գտել էր երգելու տեղ ու ամեն օր երգում էր: Յուրաքանչյուր օր Գագիկը թե՛ միայնակ, թե՛ մեր հետ բարձրանում էր Ջաբրայիլի եկեղեցի, որն աղբյուրանակալ կողմն արդեն բանդել է, ու պարտադիր երգում էր եկեղեցական երգեր, միշտ ուղեկցում էր Գագիկի աղոթքը մեզ ու վստահ եմ, որ հիմա էլ է այդպես»:

2020-ի սեպտեմբերի 27-ի առավոտյան Գագիկը հերթական անգամ սովորական հանգստությամբ խոտում էր

ընտանիքի հետ: Կրտսեր սերժանտի կոչում ուներ և վստահեցնում էր, որ իր գործառույթը թիկունքային է. «Իմանալով, որ նորակոչիկները միայնակ են մնացել, գնում է որպես սերժանտ, իրենց մոտ, ոչ մեկին չի ասում, որ գնացել է, երբ իր հետ խոտում էինք, ինքը միշտ ասում էր, որ ես ապահով տեղում եմ, առաջնագծում չեմ, ու մինչև հոկտեմբերի 2-ը առաջնագծում էր, բայց երբ զանգում էր, էնպիսի

մտածում էի՝ ինչպես կարող եմ եղբորս անունը անմահ թողնել, մտածեցի, որ ամենալավ տարբերակը գիրքն է, որովհետև նախ՝ ինքն էլ էր գիրք գրել բանակում իր 5 ընկերների մասին: Ու երբ տեսա, թե ինչպես է ինքը գրում, մտածեցի, որ հենց իր գրքից կարելի է հեղինակային հատվածներ օգտագործել այն գրքում, որ պիտի ես գրեի իր մասին»:

տեղից էր զանգում, որ չէիր կարող կրահել, որ ինքը առաջնագծում է», - հիշում է քույրը Լիանա Խաչատրյանը:

Հոկտեմբերի 2-ին նրանց դիրքը գնդակոծվում է, Գագիկին անգիտակից վիճակում տեղափոխում են Ջրականի հոսպիտալ: Մյուս մանրամասներն ընտանիքին անհայտ են, ամիսներ անց՝ 2021-ի մարտին, տեղեկացնում են, որ ԴՆԹ համընկնումով գտել են տղայի աճյունը. «Ստորվա երբեք չէր անցնի, որ էսպիսի բան կարող էր լինել, ու մինչև հիմա էլ չեմ հավատում, որովհետև իրեն տղայն չեմ տեսել, տեղեկություն չկա ինչ-որ մեկից, որ ինքը գոհվել է, այսինքն, տեղեկություն կա, բայց մենք ոչ մեկս իրեն այդպես չենք տեսել, այդ վիճակում, այդ պատճառով հոգուս մեծ մասնիկը հավատում է, որ գալու է: Հօդում, գուցե ես ինքս ինձ հույս եմ տալիս»:

Ծառայության ամիսներին Գագիկն իր ամենամոտ ընկերների մասին գիրք էր գրել: Ընկերներից մեկը 44-օրյա պատերազմից հետո հրատարակել էր այն՝ 5 օրինակով, միայն ընկերների համար, Գագիկն այդպես էր ցանկացել: Լիանան, կարդալով եղբոր գիրքը, որոշել է նրա բոլոր գրառումները, հուշերը դարձնել կենսագրական գիրք: Ասում է՝ ոչ թե գրել, այլ խմբագրել է, իրականում գիրքը Գագիկ Խաչատրյանիցն է. «Պատերազմից հետո, երբ

Ինչպես մյուս բոլոր տարեդարձներին, այս անգամ ևս Գագիկը ընկերներին հավաքել է մեկ տեղում: Մտերիմներից Նարեն, որ նաև համերգի վարողն էր, ասում է՝ իրենց ընկերության նվիրյալը, բոլորին իրար գլուխ հավաքողը միշտ Գագիկն է եղել. «Ստացվում էր այնպես, որ բոլորը զբաղված էին լինում ու, օրինակ, մեկ շաբաթ չէինք հանդիպել, մանկան նման կարող էր նեղանալ, բարկացած հայացքով նայում ու ասում էր՝ չխոսեք ինձ հետ, դուք ո՞նց եք մի շաբաթ առանց ինձ մնացել, մենք ո՞նց ենք առանց մեզ մնացել, հավաքվեք և եկեք այսինչ տեղը, մեզ հավաքողն էր ու եղպես էլ մնաց էլ մնաց էլ կլինի», - պատմում է Նարեն:

Այս համերգներն արդեն ավանդույթ են դարձել: Ամեն տարի փետրվարի 3-ի երեկոյան Գագիկի սիրած բեմից հնչում են նրա սիրելի մեղեդիները՝ անձամտերի մարդկանց շուրթերից:

Նյութը վերցված է [https://hy.amradio.am/archives/549235?doing\\_wp\\_cron=1708581354.2388350963592529296875\\_tghg](https://hy.amradio.am/archives/549235?doing_wp_cron=1708581354.2388350963592529296875_tghg)

## «Վիեննայի ֆոլկսօպերայի հեռ ունեմ անժամկետ աշխատանքային պայմանագիր». Ֆելիքս Հարությունյան

1 Ինչպե՞ս ջութակահար Ֆելիքս Հարությունյանը բարձրագավ հաջողության աստիճաններով. «Երաժիշտները վաղ տարիքից են սկսում իրենց մասնագիտական ուղին, իմ դեպքում նույնպես այդպես է: Մինչև Ավստրիա տեղափոխվելը ես սովորել եմ Հայաստանում՝ նախ Չայկովսկու անվ. երաժշտական դպրոցում, ապա Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում», - «Առավոտի» հետ զրույցում ասաց ավստրիաբնակ ջութակահար Ֆելիքս Հարությունյանը՝ հավելելով, որ վաղ տարիքում սովորած ֆունդամենտալ նշանակություն ունի արտիստի հետագա ծավալումը: Ֆելիքսը ներկայումս Վիեննայի Ֆոլկսօպերայի (Volkoper Orchestra) հիմնական անդամ է, հայ երաժշտի հետ նվագախումբը կնքել է անժամկետ աշխատանքային պայմանագիր:

«Եվ Չայկովսկու անվ. դպրոցը, և Երևանի պետական կոնսերվատորիան ավարտել եմ Ալեքսանդր Կոստյանի դասարանում: Նրա ճիշտ խորհուրդների և մեթոդական աշխատանքի շնորհիվ է ինձ հաջողվել ճիշտ դրված հիմքի վրա ստեղծել, այսպես կոչված, եվրոպական կառույ-

ցը: Ավելին, Ալեքսանդր Կոստյանի կողմից այն կառուցված է եղել, և ինձ մնում էր սովորածս ուղղակի եվրոպայում ճիշտ ուղղությամբ կատարելագործել: Ինչ վերաբերվում է եվրոպա տեղափոխվելուն, նշեմ, որ 2005 թվականին ընդունվեցի Գրացի երաժշտության և կատարողական արվեստի համալսարան՝ Դոմինիկա Ֆալգերի դասարան, 2009 թվականին գերազանցությամբ ավարտեցի բակալավրը, 2021-ին՝ գերազանցությամբ ավարտեցի մագիստրատուրան: Դրանից հետո տեղափոխվեցի Վիեննա, որտեղ սովորում եմ Վիեննայի երաժշտության մասնավոր համալսարանում՝ կրկին Դոմինիկա Ֆալգերի դասարանում: Սա իմ երկրորդ մագիստրատուրան է:

Դոմինիկա Ֆալգերի դերը շատ մեծ է իմ կարիերայում՝ որպես նվագախմբի երաժիշտ: Նա երկար տարիներ աշխատում է Վիեննայի սիմֆոնիկ նվագախմբում ու շատ մեծ փորձ ունի, դրանով էլ միշտ կարողացել է ինձ ճիշտ խորհուրդներ տալ հատկապես նվագախմբային բնագավառի առումով», - նշեց երաժիշտը: Ջութակահարի խոսքով, եվրոպական նվագախմբերում բավականին խիտ է գրաֆիկը և մեծ է ծանրաբեռնվածությունը, ու իր առօր-

յան հիմնականում կազմված է կամ աշխատանքից, կամ աշխատանքի պատրաստվելուց: Եվ եթե ստացվում է, որ օրվա մեջ մի քանի ժամ ազատ ժամանակ է ունենում, հաճույքով շախմատ է խաղում կամ որևէ ֆիլմ է դիտում: Մեր զրույցի ժամանակ անդրադարձ եղավ մրցույթների մասնակցելուն և մասնավորապես՝ Վիեննայի Ֆոլկսօպերայում հաստատվելուն: «2022 թ. դեկտեմբերին ես մասնակցեցի Վիեննայի Ֆոլկսօպերայում առաջին ջութակների թափուր տեղի համար հայտարարված մրցույթին: Նշեմ, որ եվրոպական նվագախմբերում չափազանց դժվար է մրցույթներում հաղթելը, քանի որ ընդհանուր երաժիշտների մակարդակը շատ բարձր է, նաև բարձր են հանձնախմբի սպասումները: Վիեննայի Ֆոլկսօպերան շատ հայտնի և հին նվագախումբ է, որը հիմնադրվել է 1898 թ.: Այստեղ մրցույթներն առավել ևս բարդ են: Նվագախմբերի մրցույթները սովորաբար լինում են երկու փուլով, իսկ Ֆոլկսօպերայի մրցույթը՝ ամենաքիչը երեք փուլով: Եվ լսումները հաղթահարելը դեռ գործի միայն մի մասն է, պետք է հաղթահարել նաև փորձաշրջանը:

### Ն Կ Ի Ր Ո Ւ Մ Չ Ա Վ Ե Ն Վ Ա Ր Դ Ա Ն Յ Ա Կ Ի Ն

**1** «Մարդու կյանքում կան սահմանագծեր՝ գնահատելու իր ձեռքբերումներն ու բացթողումները: 25 տարեկան, երբ կյանք ես մտնում, 50, հետո՝ 70: Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում: Իմ անցած ստեղծագործական ուղին հետաքրքիր և լեցուն է եղել: Լավ ուսուցիչներ եմ ունեցել ու նրանցից շատ բան եմ սովորել՝ Ջիվան Տեր-Թադևոսյան, Օհան Դուրյան: Լավ մարդկանցով եմ շրջապատված եղել, և կարևորը միշտ փորձել եմ իրականացնել իմ բոլոր մտահղացումները», - ասել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, դիրիժոր Ջավեն Վարդանյանը:

Նա ծնվել է 1945 թ., Հայկաստան: 1947 թ. ընտանիքի հետ հայրենադարձվել է: 1974-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դիրիժորական ֆա-

կուլտետը: 1974-1979 թթ. եղել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորի օգնական, 1979 թ. հիմնել է Երևանի պետական կամերային նվագախումբը, որը ղեկավարել է մինչև 1990 թվականը: 1994-2000 թթ. եղել է Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի պետական թատրոնի դիրիժոր: 2003-2007 թթ. Եկվադորի կառավարության իրավերով աշխատել է Կուենկայի համալսարանում և ղեկավարել երկրի բոլոր 4 սիմֆոնիկ նվագախմբերը: 2008-ին վերադարձել է Հայաստան, հիմնել է մինչև կյանքի վերջը ղեկավարել է Սենակատարների պետական անսամբլը: Նրա սկզբունքն էր՝ կատարել այն ստեղծագործությունները, որոնք հազվադեպ են հնչում Հայաստանում:

2. Վարդանյանը Հայաստանում կազմակերպել է բազ-

մաթիվ փառատոներ ու մրցույթներ, հայ ունկնդրին է ներկայացրել Ի. Ստրավինսկու, Ա. Շնիտկեի, Է. Վարեզի, Ռ. Յենցի, Զ. Այվզի, Յ. Կոկոնենի, Է. Նորդգրենի և այլ աշխարհահռչակ կոմպոզիտորների երկեր: 2. Վարդանյանին են նվիրված ժամանակակից կոմպոզիտորների 20-ից ավելի ստեղծագործություններ: Նա կատարել է հայ 38 կոմպոզիտորների 70-ից ավելի ստեղծագործություններ (պրեմիերաներ): Մասնավորապես արժանացել է Ֆ. Նանսենի անվ., ՀՀ մշակույթի նախարարության և Հանրապետական մրցույթի ոսկե մեդալների:

Խմբագրական

### 3. Ս. Բախի «Չարչարաններ ըստ Մատթեոսի»-ն՝ առաջին անգամ Հայաստանում

**Ներկայացնում ենք Ջավեն Վարդանյանի ղեկավարությամբ կայացած համերգներից մեկի մասին՝ ԵՊԿ պրոֆեսոր, արեստագիտության դոկտոր Սվետլանա Մարգարյանի հոդվածը, որը տպագրվել է «Ազգ» շաբաթաթերթում, 2000 թ., ապրիլի 29-ին:**

Խմբագրական

տության նկատմամբ հետաքրքրության աճը դիրիժորին, բնականաբար, հանգեցրեց բախյան մտահղացումներին: 1999-ին նրա ղեկավարությամբ կատարվեց «Չարչարաններ ըստ Յոհաննեսի» ստեղծագործությունը, որը յուրօրինակ փուլ դարձավ այս տարվա ձեռնարկումների համար:

Բախը «Matthäus Passion»-ը գրել է ընդլայնված կազմի համար, երկու երգչախումբ իրենց գործիքային անսամբլներով, երգեհոն և բազմաթիվ մեներգիչներ: Պասսիոն մեկնաբանելով որպես օրատորիայի և միստերիայի միջակա ժանր, կոմպոզիտորը շեշտը դրել է դրա հոգևոր ներգործության վրա. չէ՛ որ պասիոնը նախատեսված էր եկեղեցական կատարման համար: Հոգևոր բովանդակության վերադարձը մինչև օրս մնում է այդ երաժշտության էական դժվարություններից մեկը:

Կարծում ենք, երևանյան պրեմիերան կարելի է կայացած համարել հենց տվյալ խնդրի լուծման շնորհիվ, որը երկրորդ պլան մոտեցրեց տեխնիկական թերացումները: Հետագա աշխատանքը և կատարման պարտադիր կրկնությունը կապահովեց թե՛ մեկնաբանման անհրաժեշտ կոնցեպտուալությունը, և թե՛ դրա տարբեր բաղադրիչների ու մանրամասների կատարելագործումը: Եվ զգալիորեն ավելի համարյապես տեմպերը կապահովեց Բախի երաժշտական որմնապատկերի արտերկրային վեհության ոգին:

Ջավեն Վարդանյանի արտասովոր խանդավառության շնորհիվ հավաքվեց բազմաճյուղ կատարողական կուլեկտիվ: Դրա միջուկը դարձավ «Հովեր» կամերային երգչախումբը (ղեկավար՝ Սոնա Հովհաննիսյան)՝ ինչպես միշտ հանդես բերելով պրոֆեսիոնալիզմ և խմբերգային կատարման վիրտուոզություն: «Հովերը» նեցուկ էր երկրորդ՝ Փառատոնային կամերային երգչախմբի համար (ղեկավար՝ Զ. Վարդանյան): Քառաձայն, փոխլրացնող, երաժշտական հիմնական բեռը կրող երկու երգչախմբերի անչափ բարդ պարտիան առավել տպավորիչ էր առաջին և երկրորդ մասերի դրամատիկ եզրափակիչ համարներում, ինչպես նաև քնարական խորալներում: Երկու անգամ երգեցողությունը հարստացրեց Արարատյան թեմի «Մանկունք» արական մանկական երգչախմբի հրեշտակային հնչողությունը:

Նվագախմբային կազմն ընդհանուր առմամբ, ավաղ, ոչ միատարր է, բայց կան նաև հաջողություններ: Փորձառու

երաժիշտներ Հ. Թազվորյանին (երգեհոն), Ա. Դուկասյանին (ֆլեյտա), Յ. Պապիկյանին և Ս. Ոսկանյանին (հորն), Գ. Սիմոնյանին (կոնտրաբաս) համարձակորեն միացան նաև երիտասարդներ Հ. Կարապետյանը (ջութակ), Լ. Առաքելյանը (թավջութակ): Նույնը կարելի է ասել մեներգիչների մասին, որոնք էլ կանխորոշում էին ժանրի առանձնահատկությունը: Նրանք կազմում են երկու խումբ: Մեկում պատմական անձինք են (Ավետարանիչ, Հիսուս, Պետրոս, Պիղատոս, Հուդա և այլն), մյուսում՝ վերացականները (կանանց և տղամարդկանց արիաներ կատարողները):

Բնականաբար, ոչ բոլոր երգիչներն էին պատշաճ բարձրության վրա և դեռ ոչ բոլորն իրավունք ունեն երգելու «Matthäus Passion»-ում: Կնչեմ, իմ կարծիքով, միայն արժանավորներին: Դա նախ և առաջ Սուրեն Զուրաբյանն է, ով կանտատային ոճի վաղուց ճանաչված կատարող է: Նրա ճկուն, փայլուն տեմբրով ձայնն ունկնդրին մերծեցնում էր վաղընթացյալ դրամային: Հիսուսի դերերգը և բասի համար գրված մեներգերը կատարում էր Մկրտիչ Մկրտչյանը, որը նույնպես հոգևոր երաժշտության նվիրյալներից մեկն է: Չնայած որոշակի ստատիկությանը, նրա երգեցողությունը կատարողական ոճի ճշմարիտ արտացոլումն է: Բարիտոն Ռոբերտ Բավեյանը (Պիղատոս) զգալիորեն աշխուժացրեց 2-րդ մասի վոկալ գունաբույլը:

Կին մեներգիչներից իրեն վառ ձիրքով և կատարողական կայունությամբ դրսևորեց Քրիստինե Սահակյանը (մեծո-սոպրանո): Մեներգերը կատարեցին նաև ուսանողներ Գ. Մովսիսյանը (սոպրանո), Դ. Սահակյանը (մեծո-սոպրանո), Ս. Բրուտյանը (տենոր):

«Չարչարաններ ըստ Մատթեոսի» պասսիոնի երաժիշտների երիտասարդական կազմը երևանյան կատարմանը նշանակալիություն տվեց. ուրեմն կա ապագայի հույս: Դիրիժորին և բոլոր հովանավորներին շնորհակալություն այդ հիշարժան երեկոյի համար, որը նվիրված էր Աստծո հետ երաժշտության լեզվով խոսող կոմպոզիտորին:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ  
Արվեստագիտության դոկտոր,  
ԵՊԿ պրոֆեսոր,  
«Ազգ», 29 ապրիլի 2000 թ.

### Հ ու չ ե ռ Չ ա վ ե ն Վ ա ղ ա ն յ ա ն հ ի մ ա ս ի ն

**Ջավեն Վարդանյանի հետ համագործակցել են բազմաթիվ հայ և այլազգի արվեստագետներ, մերկայացնում ենք նրանցից մի քանիսի հուշերը մասնատրոյի մասին:**

Խմբագրական

\* \* \*

Ջավեն Վարդանյանը մեր լավագույն արվեստագետներից էր, որն իր գործի նվիրյալն էր: Առաջիններից էր, որ կոնսերվատորիայում փորձեց գերմանական երաժշտությունը ներառել դասընթացային ծրագրերի պարտադիր ցանկում: Նա գերմանական երաժշտության մեծ գիտակ ու սիրահար էր: Շատ համերգներ է կազմակերպել Կամերային երաժշտության տանը: 1992-1993 թվականներն էր. ինձ սասցին, որ մասնատրոն մեծո սոպրանո է փնտրում, (այդ ժամանակ 3-րդ կուրսի ուսանող էի), և ես պետք է ներկայանայի լսումներին: Գնացի, լսեց և մասնատրոն հավանեց ու ինձ առաջարկեց գերմանական երաժշտության մենահամերգով հանդես գալ: Սիրով համաձայնվեցի. Հայաստանում առաջին անգամ կատարվեցին Ռ. Շումանի, Յ. Բրամսի, Հ. Վոլֆի այն ստեղծագործություններից, որոնք երբևէ չէին հնչել. և՛

առանձին Lead (գերմանական երգ)-եր, և՛ դուետներ երկու մեծոսոպրանոյի համար: Ես և Վարդանյանի խաչատրյանն էինք կատարում, երբեք չեմ մոռանա այդ օրերը: Հատուկ մեզ համար հրավիրեց գերմաներենի մասնագետ, որպեսզի կարողանանք ճիշտ արտաբերել գերմաներեն բառերը, ճիշտ շեշտադրումով: Մասնատրոն այն ամենն ինչ նախաձեռնում էր, ամուսն էր ամենայն մանրամասնությամբ:

Հիշում եմ, որ առաջարկեց հանդես գալ Ռոսսինիի «Մոխրոտիկը» օպերայի համերգային կատարմանը՝ Մոխրոտի դերով: Այն ժամանակ, մութ ու ցուրտ տարիներին աշխատելու պայմաններ չկային, օպերայի տեսագրություններ նայելու հնարավորություններ չկային, և մենք հավաքվում էինք նրա տանը (այստեղ ուզում եմ մշել նաև նրա տիկնոջ՝ իր աշխատանքի ու կյանքի լավագույն ընկերոջ՝ տիկին Տաթևիկին, որը ողջունում էր Զ. Վարդանյանի ցանկացած մայրաձեռնություն, ու միշտ սիրով և ժպիտով էր մեզ ընդունում ու ծանապարհում), լսում էինք տարբեր ներկայացումներ, մեկնաբանում ու քննարկում: Այդպես էին անցնում մեր պարապմունքներն ու փորձերը: Նա շատ էր սիրում իր աշխատանքը, և ամեն կերպ փորձում էր մեզ փոխանցել իր սերն ու նվիրվածությունը, ուշադրությունը, վերաբերմունքը մանրուճրների նկատմամբ:

Նշենք նաև, որ առաջին անգամ Հայաստանում, 2000 թ., Երևանի կամերային երաժշտության տանը, մասնատրոյի առաջարկով և ղեկավարությամբ կատարվեց 3. Ս. Բախի

«Չարչարաններ ըստ Մատթեոսի» ծավալուն և բավականին բարդ ստեղծագործությունն ամբողջությամբ (բեմեյին է նվիրված Ս. Մարգարյանի վերոնշյալ հոդվածը): Ես, որ այդ ժամանակ սովորում էի կոնսերվատորիայի ասպիրանտուրայում, նույնպես ստացա առաջարկ ու ըրգրկվեցի կատարողների խմբում: Չնայած դաժնի ծուլն ցուրտ էր, բայց լեփ լեցուն էր, և շատ գեղեցիկ համերգ կայացավ:

Մասնատրոյի հետ մեր համագործակցությունը շարունակական բնույթ է կրել: Մենք բոլոր շատ սիրում ու հարգում էինք նրան: Նա իր գործի հմուտ գիտակն էր: Շատ լավ տիրապետում էր այն նյութին, որը վերցնում էր, գիտեր բոլոր մանրուճրները: Նրա հետ շատ հաճելի էր աշխատել: Վառ հիշատակ մեր մասնատրոյին:

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ  
ՀՀ վաստակավոր արտիստ  
Ս. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային  
ակադեմիական թատրոնի մենակատար,  
ԵՊԿ դոցենտ

\* \* \*

Մասնատրոյի մասին իմ հիշողությունները շատ վառ են: Միասին, Երևանի Ա. Խաչատրյանի համերգասրահում ունեցել ենք վազմերյան համերգ, որտեղ ներկայացրել եմ լուրջ ծրագիր. «Տրիստան և Իզոլդա»



### Հուշեր Չավեն Վարդանյանի մասին

6 օպերայից Իգորյայի արիան, նաև «Աստվածների մայրամուտը» օպերայից Բրունոհիլդայի արիան (Ձոհաբերության տեսարան): Միասին աշխատել ենք օպերային թատրոնում. Վերդիի «Մակբեթ» օպերայի աշխատանքներն էին ընթանում, Չ. Վարդանյանը նպատակ ուներ, որպեսզի այն բեմադրվեր մեր օպերային թատրոնում, ցավոք դա չիրականացավ: Նրա կատարած աշխատանքները շատ պրոֆեսիոնալ և ամուր արձաններ են թողել իմ մեջ, և ես պատրաստ եմ միշտ զարգացնել դրանք: Շատ երջանիկ եմ, որ դեռ երիտասարդ տարիքից մենք կարողացանք աշխատել մասնատրոյի նման մասնագետի հետ գերմանական երգերի շուրջ: Այդ տարիներին, 1999-2000-ականներին, շատ դժվար էր գնալ Եվրոպա, վարպետության դասեր անցնել: Բայց մենք ունեինք մասնատրոյի նման մարդ, մեծություն, հրաշալի երաժիշտ, որը մեզ փոխանցեց գերմանական Lead (թարգմ.՝ գերմանական երգ)-ի ճիշտ կատարման ավանդույթը. լավագույնս տիրապետել լեզվին, ճշգրիտ առոգանությամբ: Այդ ամենն անջնջելի հետք են թողել իմ մասնագիտական կյանքում: Չավեն Վարդանյանը շատ մանրակրկիտ էր աշխատում մենակատարների հետ, որն անգնահատելի արժեք է: Այնքան սիրով էր կատարում իր աշխատանքը, որ վարակում էր բոլորին, և մենք էլ էինք ուզում իր նման աշխատելիք ու բարձր որակ ներկայացնելիք: Մենք նրանից սովորել ենք աշխատել, լինել պահանջկոտ մեր գործում և ինքներս մեր նկատմամբ:

**ՄԱՐԿ ՄԿՐՏՅԱՆ**

ՀՀ վաստակավոր արտիստ,

Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնի մենակատար

\* \* \*

Ցավոք մեր իրականության մեջ, կարիերայի աճի լավագույն բանաձևերից մեկն այսպիսին է՝ 30 տոկոս արարիչ և 70 տոկոս գազան:

Խոսքս այսպես սկսեցի, որ պարզ լինի, թե ինչու էր կոմսերկատորիայում սովորելու տարիներին Չավեն Վարդանյանի հետ ծանոթությունն անհրաժեշտություն: Քանի որ մեծ

պակաս էի գգում Եվրոպական երաժշտական էսթետիկային տիրապետող, զրազետ, բանիմաց, և որ ամենակարևորն է՝ անկեղծ երաժշտի: Մասնատրոյ Չավեն Վարդանյանն իրապես նվիրյալ էր, ով անկեղծ սիրում էր երաժշտությունը: Վստահ կարող եմ ասել, որ նա էր, ով բացահայտեց ինձ համար Ռիխարդ Վագների մեծությունը, հասկանալի դարձրեց նրա օպերաները:

Մասնատրոյ Չ. Վարդանյանն ինչ-որ յուրահատուկ գնահատական էր տվել իմ ծայրին, և գրեթե ամեն հարմար առիթ օգտագործում էր պրոֆեսորիս՝ Ռաֆայել Հակոբյանցին համոզելու, որ ես էլ երգեմ Վագներին նվիրված առաջիկա համերգին, որը պետք է կայանար Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբի նվագակցությամբ:

23 տարեկան էի, շատ վաղ տարիք երգչի համար Ռիխարդ Վագների նման բարդագույն կոմպոզիտորի օպերաներ երգելու համար: Սակայն երեխայի պես վառվռում աչքերով ասում էր, որ հիանալի բան պետք է ստացվի:

Բանը այն է, որ մասնատրոյները մեկ անգամ են առաջարկում, իսկ այստեղ անկեղծ սպասում կար, ինչ-որ գեղեցիկի, վեհի մասնիկ դառնալու: Առաջ ընկնելով ասեմ, որ համաձայնվեցի: Ինքս վարակվելով այն մեծ հիացմունքով, որ տաճում էր Չավեն Վարդանյանը Վագների արվեստի նկատմամբ:

Հիշում եմ մի խոսակցություն իմ դասախոս Ռաֆայել Հակոբյանցի հետ. հարցրեցի նրան պրոֆեսոր, կարծես թե Հայաստանում Վագներյան երաժշտության լավագույն գիտակը Չավեն Վարդանյանն է չէ՞: Էլ չասած, որ իր նման դիրիժոր ամեն տեղ չի, որ կգտնես: Ինչո՞ւ է թիչ ելույթներ ունենում:

Դասախոսս իրեն բնորոշ անմիջականությամբ պատասխանեց. «Բալա ջան, Չավենը պետք է Գերմանիայում ապրեր, էստեղ այլևս այդ որակի մասնագետներ պետք չեն»:

Վերջին խոսակցության ժամանակ մասնատրոյ Չավեն Վարդանյանն առաջարկեց ևս մեկ անգամ, լրջորեն անդրադառնալ Ռիխարդ Վագների օպերաներին և համդիսատեսին ներկայացնել աշխարհահռչակ գերմանացու երաժշտությունն իր ամբողջ հզորությամբ, բայց ցավոք դա այլևս իրականություն չի կարող դառնալ:

Սակայն երազում եմ, որ մի օր դուրս պիտի գամ բեմ Վագների օպերաներից մեկում հանդես գալու և մտովի

հրավիրեմ մասնատրոյ Չավեն Վարդանյանին ինձ հետ մոռանալու տոկոսային հարաբերությունները...

**ՍԱՐԳԻՍ ԲԱՃԲԵՈՒԿ-ՄԵԼԻՔՅԱՆ**

Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնի մենակատար

\* \* \*

Իմ շփումը Չավեն Վարդանյանի հետ եղել է առաջին անգամ դեռ վաղ տարիքում, երբ տակավին փոքրահասակ ջութակահար էի և Երևանի կամերային նվագախումբի հետ ելույթ ունեցա որպես մենակատար: Թե ինչպիսի ջերմությամբ նա ընդունեց մեզ՝ երեխաներին, որ իր հետ պետք է մենանվագեցնեք, և ինքը մեծ սիրով, մեծ հոգատարությամբ էր նվագակցում մեզ: Եվ այդպիսի բազմաթիվ օրինակներ են եղել իր նվագախումբում: Նա հանդես է եկել բազմաթիվ պատանի երաժիշտների, ինչպես նաև, վաստակավոր շատ երաժիշտների հետ, կատարել բազմաթիվ ստեղծագործություններ պրեմիերաներ, համագործակցել բազմաթիվ հայ կոմպոզիտորների հետ: Ինչպես նաև, արդեն մեծ տարիքում ամբողջ գրույցներ են ունեցել Չավեն Վարդանյանի հետ՝ փոխանակվել ենք տարբեր պարտիտուրներով, ծայնագրություններով: Շատ բանիմաց երաժիշտ էր և տեղյակ աշխարհում կատարվող երաժշտական վերջին իրադարձություններին, ինչպես նաև բարոկկո երաժշտության մեծագույն սիրահար: Հիշում եմ, թե ինչպիսի մեծ հաճույքով էի ներկա գտնվում նրա համերգներին, հատկապես, երբ նա կատարում էր Բախի պասսիոնները, դժվարագույն այդ ստեղծագործությունները, որի համար երկու երգչախումբ էր պետք: Եվ ընդհանրապես, երաժշտության մեծ գիտակ էր, ու նրա հետ շփվելը միշտ մեծ հաճույք էր պատճառում մեզ՝ երաժիշտներին:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**

Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դիրիժոր, ԵՊՀ պրոֆեսոր

**Պատրաստե՛ք՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՑՅԱՆԸ**

Երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

### ПАМЯТИ ЗАВЕНА ВАРДАНЯНА



Неладное заподозрила на днях, когда на юбилейном гала-концерте Национального камерного оркестра, в котором он должен был выступить, его не было. А через неделю пришло известие о его смерти. Увы, после тяжелой болезни. Он стал очередной жертвой этого прожорливого ковида, который, казалось бы, отступил, но все еще уносит жизни.

Горько сознавать, что теперь в наших концертных залах, на наших улицах, среди друзей мы больше не увидим Завена Варданяна – этого замечательного дирижера, неповторимого, изумительного человека, сочетавшего в себе сказочную выносливость, благородство и верность в дружбе, неистощимую энергию и неимоверную любовь к жизни.

Наблюдая долгие годы за дирижерской деятельностью Завена Варданяна приходишь к выводу, что он в полной мере обладал всеми необходимыми для своей профессии качествами. Он не только нес в себе богатый внутренний мир, но и обладал редкой для музыканта способностью осмысливать его как бы со стороны, расчленять его на составляющие. Он имел свое четко формулируемое кредо, свои творческие принципы, свою ясно осознанную художественную вселен-

ную и предстал перед слушателями прежде всего как цельная, бескомпромиссная личность.

Тонкий музыкант, Завен получил замечательное образование. В 1970 году он окончил Ереванскую консерваторию (класс альты), а через пять лет – дирижерское отделение (класс замечательного дирижера и педагога М. Малунцяна). В разные годы в качестве альтиста он работал в струнном квартете Армфилармонии, в оркестре консерватории, в симфоническом оркестре радио и телевидения Армении. В 1969 году он стал лауреатом Закавказского конкурса молодых исполнителей. В 1975–1979 г. Завен – основатель и художественный руководитель Ансамбля современной музыки, затем – дирижер, ассистент Армянского симфонического оркестра, основатель и художественный руководитель Ереванского камерного оркестра, в 1994–1999 г. – дирижер симфонического оркестра Оперного театра...

За дирижерским пультом Завен казался совершенно спокойным. Но это обманчивое впечатление. За внешним покоем крылось по-своему "недремлющее око" дирижера, которое каким-то образом держало внимание оркестрантов на нужной точке напряжения. Его темперамент включался мгновенно на решающем взлете и обжигал слушателей и оркестрантов неожиданной новизной.

Общаясь с Завеном, невольно думалось о том, что он родился с пронзительной остротой восприятия окружающего мира, дарованием слышать природу, ощущать необходимость в слиянии с ней, с редкой отзывчивостью на впечатления и чувством музыки слова.

Особенно плодотворными были годы работы Завена во главе Ереванского камерного оркестра. Каждое выступление коллектива под его управлением было безупречным по вкусу и мастерству. Его чуткий контакт с оркестром, богатое чувство ритма, смелый полет интерпретаторской мысли привлекали к

нему большой интерес слушателей. Теплый прием и благожелательные отзывы встречали выступления Камерного оркестра и за пределами страны.

Вспомним, с каким триумфом в середине 1980-х годов Ереванский камерный оркестр под руководством Завена Варданяна гастролировал в Испании. В те годы в Испании проводилось много интересных фестивалей, в которых принимали участие такие знаменитые коллективы и солисты, как пианист и дирижер Баренбойм, с которым ереванцам посчастливилось встретиться в стенах нашей филармонии за пультом Берлинского симфонического оркестра, Клаудио Аббадо, Квартет им. Энеску, "Виртуозы Москвы", знаменитое Трио из Барселоны, Лондонский камерный оркестр, который играл с Ереванским камерным оркестром испанского композитора Гарсиа Абриля и многие другие выдающиеся деятели.


Что было интересно? Свыше десяти лет работая в этом коллективе, Завен сохранял и в себе, и в оркестре чувство новизны, открытия, ибо каждое исполнение – рождение произведения, первое, единственное, всегда новое. Поэтому так насыщены были репетиции З. Варданяна. Именно они рождали тот непоказной, скромный, сильный своей сдержанностью артистизм, который всецело подчинял публику, хотя он ничего не делал, чтобы расположить ее к себе: весь был обращен к оркестру, к музыке, к делу.

Во время репетиций казалось, что Завен слишком долго копаются в мелочах, слишком много внимания уделяет частностям. Процесс репетиций проходил хотя и интересно, но довольно мучительно. Дирижера постоянно не отпускало смутное ощущение неладности. Лишь ненадолго возникало удовлетворение и тут же пропадало – от чьей-то ненужной паузы, от неживого звука, который только что был живым. Все, что вчера было найдено, сегодня может рассыпаться, потому что дирижер постоянно имеет дело с тем, что движется и меняется. Восстать ли против изменчивости оркестранта или смириться с ней, а ес-

# Արցախի Մշակութային Ցեղասպանությունը



Արցախյան Հայոց Ցեղասպանությունը դա բացի մարդկային զոհերից նաև մշակութային Գեներոն է և շարունակվում է տեղի ունենալ, որն ավելի սարսփելի է: Եվ մենք՝ Մաշտոցյան գրերը և հայկական երաժշտության ձայնակարգերը (լադերը) կրողներս, երբ էլ որ լինի պատասխանատվություն ենք պահանջելու: Հայ Մշակույթի Ցեղասպանություն, որը մինչև այսօր շարունակվում է: Եթե Արցախի հայությունը՝ 120000 հոգի, սեպտեմբերի 19-ին թողեց իր բնօրրանը եկավ միացավ մայր հայրենիքին՝ Հայաստանին, ապա Հայոց Մշակույթի Գեներոնը շարունակվում է առ այսօր: Այսօր, որպես մշխարք մեր գործընկերները մտավորականներին են նվիրում իրենց հետ բերած՝ Աստղաշենի լեռների փոքրիկ աստղիկ քարերը, մեկ կամ երեք հատիկ, Դադիվանքի բերված՝ հողմ փոքրիկ սրվակով և մեղրանուշ մոմերից՝ երկու հատիկ, Դազանչեցոցից և Ամարասից իրենց կարոտալի հայացքները, որը շաղախվում է մեր հուզումները հետ, սոցիալական ցանցերում տպավորված ավերումների լուսանկարներով, որոնք ստիպեցին պահպանության միջազգային որոշումներ կայացնելուն, զավթող պետությանը սաստելու՝ ձեռք չբարձրացնելու եկեղեցիների խաչերի, քրիստոնեական արժեքների վրա:




դի տակ կանգնած լողացողն է» այսինքն, ինքն է իր մտքով ու խելքով և եությանը արժեք՝ դա է հայը:

Ահա երիտասարդի նկարը, եթե ճանաչում եք խնդրում եմ արձագանքեք (աղբյուրը՝ Ֆրանսուա Դե-ՎեՋեՍՆ @fdevedjian Այս միայնակը՝ խաչքարը գրկին, #Արցախի (Լեռնային Ղարաբաղի որպես միջազգայնորեն ընդունված տերմին կհանդիպի տեքստում) ժողովրդի խորհրդանիշն է 2023 թ., 25 դար հայերն ապրել են այս հողի վրա՝ լցված իրենց հիշողությամբ, իրենց մնացորդներով և արյունով. Մի քանի շաբաթից դահիճները կհավասարեցնեն ամեն ինչ. 20:50. սեպտեմբերի):

2023 թվականի սեպտեմբերի 19-ը «կմնա հայոց պատմության մեջ որպես 1920 թվականից ի վեր ժողովրդի ամենամեծ ողբերգության՝ Արցախի բնաջնջման ամսաթիվը, գրում է Վիտոլդ Ռեպետովիչը. (<https://sovereignty.pl/the-azeri-extermination-of-artsakh/>) այս ինտերնետային հրապարակումից կրճատումներով բերում ենք տվյալներ, որոնք մշակութային Ցեղասպանությանն են վերաբերում.)

Սուս գյուղի մոտ գտնվող Ամարասի վանքի տեսարանը. Արցախի Հանրապետության Մարտունու գավառ (աղբյուր՝ iStock – Wirestock).



Ոչ մենք ազգովի պետք է հավատանք մեր ժողովրդի հայի բազկին, որ վերադարձնելու ենք: Դեռ ամեն ինչ կորսված չէ:

Մեր հարուստ նյութական մշակութային ամենահին հուշարձանների թվում են Տիգրանակերտի ավերակները՝ մայրաքաղաքներից մեկը, որը հիմնադրել է Տիգրան Մեծը մ.թ.ա. I դարում: Ամբողջ տարածքում սփռված են խաչքարեր՝ քարե խաչեր, որոնք մեր նախնիները և այժմ էլ մենք կանգնեցնում ենք ամենուր, որտեղ ապրում ենք: Դրանց ծագումը տարբեր դարաշրջանների է: Շատ խաչքարեր են ավերվել, հանվել ու բնաջնջվել (ինչպես Նախիջևանի Նոր Ջուղայի համալիրը - Գ. Շ.), հայկական գերեզմանոցների ու վանքերին նման ճակատագիր է սպասվում:

Արցախում դրանց թիվը անհամար է: Ամենակարևորներից են Դադիվանքը, Գանձասարը և Ամարասը: Դրանցից վերջինը թվագրվում է IV դար, չնայած այն վերականգնվել է իր ներկայիս տեսքով XIX դ.: XIII դարում մոնղոլների, XIV-ում Թամերլանի և XVI դարում՝ թուրքերի արշավանքներից հետո:

Միջնադարյան աղբյուրները նշում են, որ վանքը հիմնել է ինքը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, մարդ, ով 301 թվականին պատճառ է դարձել, որ Հայաստանը դառնա քրիստոնեություն ընդունած 1-ին պետությունն աշխարհում:

Սակայն այն հատկապես աչքի է ընկնում նրանով, որ այնտեղ հայոց այբուբենը ստեղծած վարդապետ Մեսրոպ Մաշտոցի տունն է:

Արցախը Լեռնային Ղարաբաղի պատմական հայկական անվանումն է: Այդպես էին կոչվում այս հողերը հինու, երբ Հայաստանը ծաղկում էր որպես կայսրություն Տիգրան Մեծի օրոք: Պատմական անվանումը վերականգնվել է Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից 2017 թ.: Լուծարման նվաստացուցիչ ակտն ստորագրվել է, որպեսզի բնակչությունն ազատ հեռանա (թեև դա չի վերաբերում բոլորին), քանի որ Արցախը շրջապատված էր ադրբեջանական զինուժով՝ 2022 թվականի դեկտեմբերից: Դա տեղի ունեցավ Ռուսաստանի հավանությամբ, թեև 2020 թվականի նոյեմբերին ստորագրված 44-օրյա պատերազմին վերջ տալու փոխըմբռնումը սահմանում էր, որ ռուսական խաղաղապահ զորքերը երաշխավորելու են Արցախում հայերի անվտանգությունը: <...>

Ընդամենը մի քանի օրվա ընթացքում ավելի քան 100.000 մարդ լքեց Արցախը՝ գրեթե ողջ բնակչությունը: Նրանք այլընտրանք չուներին, քանի որ

ոչ մի հայ չէր կարող իրեն ապահով զգալ մի երկրում, որտեղ ոչ միայն հայերի համոզեալ ատելությունը նորմ է, այլ իշխանությունը տիրապետում է ամենաբացարձակ տոտալիտար ռեժիմներից մեկին: <...>

Ուստի հայերի համար դժվար է հավատալ, որ <...> վարչակարգը երաշխավորում է նրանց պաշտպանությունը էթնիկական, քաղաքական և կրոնական ճնշումներից, հաշվի առնելով, <...> ո՞ր կհարգվեն իրենց հիմնական իրավունքները: <...>

(Ստորև տես՝ Շուշի քաղաքի նկարը) Շուշի քաղաքի հայկական թաղամասերը, որոնք ավերվել են ադրբեջանական զինուժի կողմից 1920 թվականի մարտի ջարդերի ժամանակ, ֆոնին պղծված Սուրբ Ամենափրկիչ հայկական եկեղեցին:

Հայերի դեմ կատարված սպանությունների պատմությունը շատ երկար է. 1915 թվականին փլուզվող Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց Ցեղասպանությունից մի քանի տարի անց Բաքվում տեղի ունեցավ հայերի բնաջնջումը, ինչպես նկարագրված է Ստեֆան Ժերոմսկու «Առաջին գարուն» վեպում: Նաև 1920 թ. մարտին ադրբեջանցիներն սպանեցին Լեռնային Ղարաբաղի պատմական սրտի՝ Շուշիի 20000 հայ բնակիչների: Նրանք, ովքեր չեն սպանվել, փրկվել են՝ փախչելով, ինչի արդյունքում այդ քաղաքում տիրող հայերն իսպառ անհետացել են դրանից հետագա 72 տարիների ընթացքում:

1988-ի փետրվարին, ի պատասխան Լեռնային Ղարաբաղի հայերի պահանջներին, որ այն ժամանակվա ինքնավար մարզը կցվի Հայկական Խորհրդային Հանրապետությանը, ադրբեջանցիներն իրականացրեցին ջարդերի նոր շարքից առաջինը՝ Սունդալիթում, <...> այնուհետև Գյանջալի, Բաքվի և Մարաղայի կոտորածները, ինչպես նաև Խորհրդա-ադրբեջանական համատեղ օպերացիան, որի նպատակն էր բոլոր հայերին վտարել Ղարաբաղից: Այն նպատակն, որն այն ժամանակ չիրականացավ՝ ԽՍՀՄ-ի միջանկյալ փլուզման պատճառով, այժմ իրականացվել է:

Գանձասարի վանքը թվագրվում է XIII դարով, թեև այդ վայրում հայ վանականների մասին վկայություններ կան դեռևս X դարում: Հիմնադրել է խաչենի մելիքության հայոց կառավարիչ Հասան-Ջալալ Դաուլան: Սա միջնադարյան Արցախում ստեղծված հինգ հայկական վասալ պետություններից մեկն էր (ընդգրկում էր ոչ միայն հետագա Լեռնային Ղարաբաղի տարածքը, այլ նաև հարևան որոշ շրջաններ), և նրա մայրաքաղաքը՝ Շուշին էր:

Այս նահանգներն սկզբում կախված էին Բագրատունյաց հայկական թագավորությունից, սակայն նրա անկումից հետո՝ XI դարում, անցան տարբեր տիրակալների տակ, իսկ XVI դարում դարձան պարսկական տիրույթ: Գանձասարն իր հիմնադրումից ի վեր ծառայել է որպես հայ քրիստոնեության կենտրոն Արցախում: Դադիվանքն իր հերթին եղել է խաչենի իշխանների թաղման վայրը: Հայկական ավանդույթի համաձայն այն հիմնադրել է Սուրբ Թադևոս Առաքյալի աշակերտ սուրբ Դադին, ով ասում են, որ I դարում քրիստոնեացրել է շրջանը: Վանքն առաջին անգամ հիշատակվում է IX դարում, իսկ ներկայիս կառուցվածքը թվագրվում է XIII դարում:

Այս շինություններն այնև հայ վանականներով չեն բնակվում: Դադիվանքը գտնվում է 2020 թվականին Ադրբեջանի կողմից գրավված տարածքում, երբ այնտեղ մնացած վանականները պետք է պաշտպանվեին ռուս խաղաղապահների կողմից:

Սեպտեմբերին, սակայն, Արցախում սուրբ վայրերում գտնվող բոլոր հայերին ռուսներն ասացին, որ իրենց անվտանգությունը չի կարող երաշխավորվել, և որ ռուսները չեն արձագանքի, եթե ադրբեջանցիները փորձեն առևանգել նրանցից որևէ մեկին: Վերջիններից մեկը, ով տարհանվեց Հայաստան, Տեր Հովհաննեսն էր, ով 2020 թվականին հայտարարեց, որ պաշտպանելու է Դադիվանքի վանքը մինչև վերջ՝ մի ձեռքում Աստվածաշունչը, մյուսում՝ հրացանը: Ադրբեջանցիներն անօդաչու թռչող սարքով հարձակում են գործել նրա տան վրա՝ վանքին մոտ՝ ծանր վիրավորելով նրան:

Մոտավոր հաշվարկներով Արցախում կա ավելի

համար, ովքեր հողաթափերով և մեկ հագուստով մայր Հայրենիք են եկել, նկուղներում շուրջ 10 ամիս պատսպարվելուց հետո (2022 թ. դեկտեմբերի 22-ից մինչև 2023 թ. սեպտեմբերի 19-20-ը), իրենց հետ բերել են ընտանեկան այբուբենը ու լուսանկարները, գերդաստանի պատմությունը, դրա հետ նաև Արցախ աշխարհի պատմությունը պահպանելու համար, իրենց և տների փաստաթղթերը, կամ գրչի մարդիկ մեկական օրինակ իրենց հեղինակային գրքերից ու, էլ ոչինչ: Որովհետև, մեքենաներով տեղահանվելուց ճանապարհին ոտքով տեղահանված մարդկանց էին իրենց հետ տեղափոխում, իրենց կահ-կարասիքի արկղերը թափելով Արցախի ճանապարհների մատույցներում: Մարդը մարդով է ապրում և կարևոր է: Բայց ինչպես տեղափոխել մեր սր-



բություն վանքերը, հուշարձաններն ու գերեզմանները, հուշաքարերը: Մի նկար տեսա երիտասարդը կոտրված խաչքարը գրկած տեղահանվում էր իր ունեցածն այդ կարևոր մասունքն էր ու էլ ոչինչ... Ես հիշեցի Հենրիկ Իգիթյանի բնորոշումը. թե ով է հայը, նա պատասխանեց «հայ-մարդը՝ ցնցու-



### «Վիեննայի ֆուլսոպերայի հետ ունեմ անժամկետ աշխատանքային պայմանագիր». Ֆելիքս Հարությունյան

5 Իմ փորձաշրջանը 2023 թ. հոկտեմբերին ավարտվեց, և նվազագույնի երաժիշտների կողմից ես միաձայն հաստատվեցի որպես նվագախմբի հիմնական անդամ՝ առաջին ջութակների կազմում», - տեղեկացրեց երաժիշտը: Մեր հարցին՝ ո՞րն է իր հաջողության գրավականը, Ֆելիքսն այսպես արձագանքեց. «Ընդհանուր առմամբ հաջողության գրավականն առաջին հերթին աշխատասիրությունն է, նաև ոչ պակաս կարևոր է համբերատարությունը: Ես ավելի քան 10 միջազգային մրցույթների եմ մասնակցել և կարելի է ասել՝ բավականին փորձ եմ ձեռք բերել այդ ոլորտում: Նաև կարծում եմ, որ շատ կարևոր է մրցույթներին մասնակցելը, բայց ոչ ինքնանպատակ, այլ որպես միջոց, հնարավորություն՝ տանը կատարած աշխատանքը բեմում ցուցադրելու համար: Մրցույթը կոփում է երաժշտին, սովորեցնում է հաղթահարել սթրեսը: Միջազգային մրցույթները նաև լավ հնարավորություն են միջազ-

գային գործընկերների հետ ծանոթանալու, կապեր ստեղծելու առումով, բնական է նշել, որ միշտ չէ, որ մրցույթների մասնակիցները սիրալիր են միմյանց նկատմամբ»: Ինչ վերաբերվում է այցեքարտային ստեղծագործություններին, այս մասին էլ մեր գրուցակիցը նշեց. «Բոլոր ստեղծագործություններն էլ կատարում եմ մեծ հաճությամբ, բնական է մեկ-երկուսն առանձնացնելը, բայց այնուամենայնիվ կնշեմ մի քանի անուններ: Լյուդվիգ վան Բեթհովենը, Էժեն Իզային, Յենիֆր Կենյակսկին և Արամ Խաչատրյանը միշտ առանձնահատուկ տեղ են ունեցել իմ նվագազանկում»: Հայաստանի հետ կապված ծրագրերից էլ խոսեցինք: «Ես Վիեննայի ֆուլսոպերայի հետ ունեմ անժամկետ աշխատանքային պայմանագիր, ու չեմ կարող կոնկրետ բան ասել Հայաստան վերադառնալու մասին, բայց Հայաստանի հետ կապված ունեմ շատ ծրագրեր, երաժշտական գաղա-

փարներ, որոնք ցանկանում եմ մոտ ապագայում իրագործել: Խոսքը մասնավորապես համերգային և դասավանդման գործունեության մասին է: Անցյալում ես հաճախ ելույթ եմ ունեցել Հայաստանում՝ որպես մենակատար, համագործակցել եմ Ֆիլհարմոնիկ և Կամերային նվագախմբերում աշխատում է նաև մայրս՝ ջութակահար Գոհար Դանիելյանը: Եվ որպես ջութակահար իմ ձևավորման մեջ նա է ունեցել մեծ դեր: Առանց մայրիկիս համերգատար աշխատանքի և մանկավարժական խորհուրդների՝ ես չէի հասնի մասնագիտական հաջողությունների», - ընդգծեց Ֆելիքս Հարությունյանը:

ԳՐԱՐ ԳՎԿՈՒՅԱԼ  
Նյութը վերցված է  
<https://www.aravot.am/2024/02/21/1401171/> կայքից

### ПАМЯТИ ЗАВЕНА ВАРДАНЯНА

7 Լի смириться, то как при этом сохранить гармонию целого? Решать это надо на каждой репетиции и мгновенно, чтобы никто не сомневался, что решение верно. Все это слишком сложно. Потому и мало дирижеров-художников. Как признался однажды композитор Рубен Саркисян, Завен о каждом такте, каждой мысли учинял ему подлинный допрос, требующий ответа на все возникшие у него сомнения. Но в дальнейшем сочинение собиралось в единое целое – из тщательно изучения рождальное исполнение артистичное и мощное. Замечательный интерпретатор классической музыки, Завен неизменно выступает и как первооткрыватель, и неутомимый пропагандист современных авторов. Среди самых интересных его работ – исполнение произведений Бартока, Шостаковича, Ксенакиса, Шенберга, Шнитке, Мансуряна, Зограбяна, Саркисяна. Его коллективу, несомненно, принадлежала заслуга в популяризации многих современных армянских композиторов. Постоянно пополнявшийся новой музыкой репертуар, интересные циклы концертов, многочисленные премьеры, энтузиазм в пропаганде армянской музыки – все это создавало заслуженный авторитет одному из интересных музыкальных коллективов страны. За всем этим – дни напряженной работы, строгой требовательности к себе и оркестру. Многие сочинения с легкой руки З. Варданяна прозвучали в Ереване впервые. Если полистать страницы нашей газеты, нетрудно восстановить программы его концертов. Как правило, он включал в них не только новинки, но и те сочинения, которые написаны давно, но у нас в Армении ни разу не исполнялись. Среди них одно из самых интересных, своеобразных, но и сложных произведений – Альпийская симфония Рихарда Штрауса. Почему Завен обратился именно с этой симфонии? По его

словам, прежде всего его привлекла прекрасная музыка. Эта музыкальная живопись написана с присущими композитору фантазией и изобретательностью. Кроме того, кредо самого дирижера – стремиться показать те сочинения, которые по разным причинам прежде у нас не исполнялись. Именно в жанре программной симфонии Штраус проявил свою исключительную творческую силу и самобытность. «Другие программные сочинения, – отмечал Завен, – у нас исполнялись замечательным дирижером, перед которым я всегда преклонялся, – Давидом Ханджяном. После возвращения из Вены он ввел в репертуар оркестра многие произведения композитора и замечательно играл Смерть и просветление, Дон Жуан, Жизнь героя, Приключения Тилля <...> Мне хотелось, чтобы музыка Альпийской симфонии была воспринята как философская лирика». Именно в таком ключе и была воспринята эта премьера. Концерт еще раз доказал силу и жизнестойкость дирижерского принципа З. Варданяна – ощущение события бывает только в те дни, когда исполняется что-то еще никому не известное. Вспоминаются также концерты Завена в середине 1990-х, исполнение оратории «Сотворение мира» Гайдна, созданной автором на склоне лет. Понадобилось двести с лишним лет, чтобы это масштабное творение великого австрийца прозвучало на нашей сцене. Многие могут вспомнить и концертные премьеры «Похищения из сераля» при участии солистов, хора и оркестра Академического театра оперы и балета им. Спендиарова, и «Волшебной флейты» Моцарта, концерт в Большом зале филармонии с участием Филармонического оркестра под управлением З. Варданяна и солистов Оперного театра, где были исполнены отрывки из тетралогии «Кольцо Нибелунгов» Вагнера. На нашей памяти также организованный им фестиваль

духовной музыки, в рамках которого впервые в Армении были исполнены «Страсти по Иоанну» и «Страсти по Матфею» Баха. Мышление Завена не было задето штампами времени. Оно – вне заданных категорий и именно поэтому было свободно и естественно. В его делах и решениях всегда проявлялись собственные точные и никем не навязанные жизненные критерии. Только это неизменное следование внутреннему голосу определяло логику его поступков. Заслуженный деятель искусств Армении Завен Варданян на всю жизнь сумел сохранить главное – молодость души. Он не устал и не погас душевно. Это постоянно доказывали и концерты Ансамбля солистов, художественным руководителем и главным дирижером которого он был, и его выступления, когда он вставал за пультом других оркестров. А ведь это очень важно для каждого профессионального музыканта – сохранить первозданное ощущение любви к музыке как таковой, чтобы не стало доминировать ремесло. ... Есть тайна, которая объединяет всех живых существ при любом общественно-экономическом устройстве, которая важнее революций, важнее всего. Она в том, что жизнь быстротечна. И конечна. Завен был и остается для нас образцом интеллигента, человеком, дарящим другим свет благородства, образованности, бескорыстного служения близким, музыке и избранному делу.

НАТАЛИЯ ГОМЦЯН  
15–21 марта 2023 //Голос Армении

### Արցախի Մշակութային Կենտրոնի Կենսապատմությունը

8 քան 4000 հայկական պատմական հուշարձան, որից 370-ը եկեղեցիներ են: 2020 թվականին արաբեզանցիները վերահսկողության տակ են վերցրել 1450 հուշարձան, այդ թվում՝ 161 եկեղեցի: Նրանց ճակատագիրը հայտնի չէ, քանի որ օտար-կն երկրացիներին (էլ չեմ խոսում հայերի մասին) թույլ չեն տալիս մուտք գործել այդ վայրեր: Կարծում ենք, վաղուց է գրված է, սակայն, կրկնվում է մեր իրականությունը՝ հայաթափություն, տեղահանություն, գտում, եղեռն, 1915... մշակութային սպանող Նախիջևան... այսօր Արցախը՝ Ամարասը, Ղազանչեցոցը, Գանձասարը ... Միևնույն է ետ ենք բերելու, գիտե՞ք քանի անգամ է Ամարասը գրավվել և վերականգնվել. Ելիր, ու կրկին «Ելիր, ով հայ» (կոմպոզիտոր Ա. Բերբերյան): Գիտե՞ք մեր այբուբենի աղոթքով ինչ է ընթերցվում, Ամարասը կարդանք ակրոստիկոսով. Արարիչ Մտաց Արարիչ մեր Արարիչ Սրբոց Ամարասը՝ Մեսրոպ Մաշտոցի բացած առաջին դպրոցն է Արցախում: Իր հազարամյա պատմության մեջ մի քանի անգամ ասպատակությունների է ենթարկվել և վերականգնվել: Մեսրոպ Մաշտոցն առաջին ուսուցիչն ու միայն Հայոց գրերի, այլ Հայոց լաղային, այսինքն՝ եղանակների համակարգի, մաշտոցյան չքնաղ Շարականների ստեղծողը: Շարական: Միայն խոսքով ու զգացողությամբ հոգևոր հուզումով ու թրթռով տաղով, որը երգ է: Պոեզիա՝ տաղաչափություն բանաստեղծություն: Շարական պոեզիայի և երաժշտության տաղաչափություն: Տաղը՝ թրթռն է տիեզե-

րական վիբրացիան, հնչյունավորված և պոեզիան՝ տաղաչափությունը՝ երկուսը միասին հոգու թրիչքն են ստեղծում և միայնակվում ու այնպես, որ չես կարողանում տարանջատել միմյանցից: Համաձայն հայ պատմիչների վկայությունների՝ Ամարասի վանքի եկեղեցին հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, IV դարի սկզբին: Եկեղեցու արևելյան կողմում է թաղված Աղվանքում քրիստոնեություն տարածելուն ուղղված իր առաքելության ընթացքում 338-ին նահատակված Գրիգորիսը: V դարասկզբին Մեսրոպ Մաշտոցն Ամարասի վանքում բացում է Արցախի առաջին դպրոցը: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ 489 թ. Աղվանքի Վաչագան Գ Բարեպաշտ թագավորն Ամարասում վերագտնում է Գրիգորիսի գերեզմանի տեղը և վրան մատուց կառուցում՝ միաժամանակ ավարտին հասցնելով նաև եկեղեցու կառուցման աշխատանքները: V դ Ամարասի վանքը դառնում է երկրամասի խոշոր կրոնական կենտրոն և եպիսկոպոսանիստ: 821 թվականին վանքն ասպատակում են արաբները: Ըստ Ստեփանոս Օրբելյանի վկայության՝ 1293 թ. մոնղոլ-թաթարների Բայտու խանը կողոպտում է վանքը՝ որպես ավար տիրանալով Սուրբ Գրիգորիսի գավազանին ու 36 ակներով ընդլուծված ոսկեծույլ մի խաչին: Հերթական անգամ Ամարասի վանքն ավերվում է նաև 1387 թվականին՝ Լենկթեմուրի արշավանքների ժամանակ: Վանքն իր անընդմեջ գործող դպրոցով շարունակել է մնալ որպես կրոնական և մշակութային կենտրոն: XV-XVI դարերում այստեղ գրվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: XVII դարերի 3-րդ քառորդին նորոգվում է Գանձասարի Պետրոս կաթողիկոսի կողմից: XIX դարի 2-րդ քառորդին Ամարասի վանքային համալիրը, որն ուներ XVII դարում կառուցված բավականին ուժեղ պաշտպանական համակարգ, օգտագործվել է որպես ամրոց, իսկ 1832–1847 թթ. ծառայել է որպես ռուս-պարսկական սահմանի մաքսա-

տուն: 1848-ին վանքը հանձնվել է Գանձասարի մետրոպոլիտ Բաղդասարին: Խարխլված եկեղեցին վերականգնվել է 1858 թ.՝ շուշեցի հայերի օժանդակությամբ, 1898 թ. շուշեցի ճարտարապետ Միքայել Տեր-Իսրայելյանցի կողմից պատրաստվել է Գրիգորիսի նոր տապանաքար (տե՛ս՝ նկարը նախորդ էջում): XIX դարի վերջին վանքն ուներ կավածքներ վարելահողեր, այգի, ջրաղաց: Խորհրդային կարգերի հաստատումից հետո լքվել և ամայացել է: Վերաբացվել է 1992 թ. որպես Արցախի թեմի գործող վանք: Ամեն տարի հարյուրավոր այցելուներ է ունենում Ամարաս վանքը: 2019 թ. սկսվեցին Ամարասի վերանորոգման աշխատանքները, որոնք 2020 թ. 44-օրյա պատերազմի պատճառով որոշ ժամանակով դադարեցվեցին: Այնուհետև վերանորոգման աշխատանքները վերսկսվեցին: Իսկ այժմ 2023-ի սեպտեմբերի 19-ին 120000 արցախցիների բռնատեղահանումից հետո ագերիներն ավերել են Սուրբ Գրիգորիսի գերեզմանը և Ամարասը շարունակում են ավերել ու պղծել: 2009-ին Ծիծեռնակաբերդի «Ակոռ» ռեստորանում, «ԵՊԿ հրատարակչության» Շնորհանդեսին, 44-օրյա պատերազմում զոհված երգիչ և անմոռանալի գործընկեր Գեորգ Հանեանի «Երեխայիք» ձայներիզի առիթով միջնադարապետ Նյու-Յորքքաբակ Գրիգոր Փիտեմանն ըմբոստ ձայնով ասաց. «Ամենասարսափելին մեր մշակութային Եղեռնն է»: Մինչև օրս այդ համեստ, ազնվազույն, ցածր ձայնով խոսող մեծատառով հայի ձայնն ունկերումն է:

ԳՐԱՐ ԸՎԿՈՒՅԱԼ  
Նյութը պատրաստվել է հանրագիտարանային սովակների հիման վրա, նկարները X-ung.գանցից

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»



Յուրաքանչյուր 31-ին, Գիտական խորհրդի ընդլայնված նիստում կայացավ «Կոմիտաս» հոբելյանական մեդալի շնորհումը 2023 թվականի հոբելյաններին (հունիս-դեկտեմբեր ամիսներին): Տեղի ունեցավ 2023 թ. Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի նախաձեռնությամբ և



ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ «Արամ Խաչատրյան 120» նախագծի մաս կազմող ձայնասկավառակի շնորհանդեսը: Մասնակից ուսանողներին և ծրագրի ստեղծագործությունները պատրաստած ղեկավարներին, կոնցերտմայստրներին մեծ հանդիսավորությամբ հանձնվեց հոբելյանական ժողովածուն, որն ընդգրկում է նմուշներ Արամ Խաչատրյանի կամերային ստեղծագործություններից և փոխադրումներ բալետներից (Ձայնասկավառակի մասին տես «Երաժիշտ» ամսաթերթի 1(171) 2024 համարում): Աշխատանքային երկարամյա գործունեության համար շնորհակալագիր տրվեց Լարային գործիքների ամբիոնի պրոֆեսոր Բագրատ Վարդանյանին և ԵՊԿ գրասենյակի վարիչ Սուսաննա Փիրուզյանին:

գործությանը նվիրված երեկո: Ծրագրի նախաձեռնողներն էին՝ Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Իրինա Բաղայանը և Լարային գործիքների ամբիոնի դասախոս, ՀՀ վաստակավոր արտիստ Արամ Թալալյանը: Նրանց միացել էին կոնսերվատորիայի ուսանողներ, ուսումնական ասիստենտներ:



Պրոֆեսոր Բագրատ Վարդանյան, նախագահությամբ՝ Սոնա Հովհաննիսյանի, Արամ Հովհաննիսյանի, Շուշիկ Մովսիսյանի, Քրիստինե Մեյմարյանի, Հուշանիկ Մեհրաբյանի



Արևիկ Մելքոնյան, Իրինա Բաղայան, Սոնա Թորոսյան, Անդրանիկ Աղաջանյան

Փետրվարի 1-ին, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի համերգարահում (բեմի տեղափոխմամբ դահլիճի լայնությամբ շատ հետաքրքիր ակուստիկ լուծում էին տվել կազմակերպիչները) կայացավ Ռոբերտ Շումանի ստեղծա-

Շ Ն Ո Ր Յ Ա Վ Ո Ր ՈՒ Մ Ե Ն Ք

Ջութակահար Արուսյակ Արևշատյանը «Classical stars» միջազգային երաժշտական առցանց մրցույթում (Վարչակազմ) հաղթել է «Վիրտուոզ պիես» և «Ջութակ, պատանի մասետրո» անվանակարգերում: Արվեստագետների ընտանիքում ծնված աղջնակի համար ջութակի դասերը սկսվել են հինգ տարեկանից: Նրա երաժշտական առաջին քայլերը կապված են Պ. Չայկովսկու անվ. միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի հետ, որտեղ դարձել է միջազգային մրցույթների դափնեկիր: Կոնսերվատորիայում սովորելու տարիների հերթական հաղթական դիպլոմը «Stockholm International Music Competition»-ում էր: Պրոֆեսոր Արտաշես Սկրտչյանի մասագիտական ամուր դասարանը ներկայացնող Ա. Արևշատյանը մրցույթին հնչեցրել է Վիրտուոզ ջութակահարների նվագախումբում համախառն հանդիպող Էռնեստ Շոստոկի «Պոեն»-ը, ինչպես նաև Նաթան Միլշտեյնի «Պագանինան»-ը:



Արուսյակ Արևշատյան

վող «Classical Musical Stars» միջազգային երաժշտական մրցույթի Կոմպոզիցիա անվանակարգի Արծաթե մրցանակին: Շուշան Արևշատյանը երրորդ կուրսի դաշնակահար է և զուգահեռ սերտում է նաև կոմպոզիտորական դասընթացի այբուբենը: Նրա առաջին ուսուցիչն էր լուսահոգի Լևոն Չաուշյանը: Այսօր նա շարունակում է ուսումնառությունը Արամ Հովհաննիսյանի ղեկավարությամբ՝ այդպես դառնալով նույն ստեղծագործական դպրոցի հետևորդը: Իր բնորոշմամբ գրում է էքսպրեսիոնիզմի սահմաններում՝ ընդունելով դասական արտահայտչաձևերի գիճանոցը: Մրցույթում արծաթե մրցանակի արժանացած «Scherzo»-ն այսպիսի օրինակներից մեկն է: «Արագ և քնարական հատվածներով արտահայտում է կերպարների հակադրությունը, որն ավարտվում է ֆուգայակերպ ուշացած զուգահեռով», - մանրամասնում է հեղինակը:



Շուշան Արևշատյան

Ետյուղը, Ալեքսանդր Սկրյաբինի երկու պոեմը, օպերա 32 և Ֆրանց Շոբերտ-Ֆերենց Լիստի «Մարգարիտը ճախարակի մոտ» տրանսկրիպցիան: Շուշան Արևշատյանի նախորդ հաղթանակը երկու տարի առաջ էր. 2022 թվականին Շվեդիայի թագավորական կոնսերվատորիայի կազմակերպած Ստոկհոլմի IX միջազգային մրցույթում արժանացել էր երրորդ մրցանակին: Նրա կյանքում կարևոր նշանակություն ունի իր մասնագիտության ղեկավարը, ում հմտությունը և աշխատասիրությունը ժառանգելն իր համար մեծագույն պատիվ է: Մինչ կոնսերվատորիան Շ. Արևշատյանը սովորել է Պ. Չայկովսկու անվ. միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցում՝ Ջառա Վարդանյանի մոտ: Երաժշտության հանդեպ սերն այստեղից է սկսվել, չնայած որ երկու տարեկանից լսում էր մեծանուն դաշնակահարների կատարումները: Դաշնամուրը միանգամից դարձել է երազանքի գործիքը և վստահ է՝ կյանքում ընդմիջտ դաշնամուրի հետ է առնչվելու, ինչպես մանկուց իր համար սիրելի դարձած երաժշտի՝ Վլադիմիր Հորովիցի համար էր: Նա հույս ունի ապագայում ավելի հաճախ հանդես գալ միջազգային բեմերում, կատարել մեծանուն կոմպոզիտորների ու սեփական ստեղծագործությունները և կայանալ յուրաքանչյուր մասնագիտության ասպարեզում:

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅԹՅԱՆԸ

Երաժշտական անյուզարձը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

2024թ. փետրվարի 15-ին ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղը հյուրընկալել էր բուհի լավ բարեկամ՝ «Apple Hill» (Նելսոն, ԱՄՆ) կամերային երաժշտության կենտրոնի տնօրեն



«Apple Hill» կամերային երաժշտության կենտրոնի տնօրեն Խավիեր Կաբալիերոն ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

Խավիեր Կաբալիերոյին: Շատ ջերմ հանդիպման ընթացքում խոսվեց կրթական երկու հաստատությունների միջև համագործակցության խորացման ուղղված ջանքերի հա-

մատեղման ու բաղձալի արդյունքների հասնելու մասին: Հանդիպմանը ներկա էին Apple Hill-ում վերապատրաստում անցած ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի երկու երաժիշտները՝ դաշնակահարուհի՝ Մարինա Գալստյանը և ջութակահար՝ ԵՊԿ ԳՄ դասախոս Սպարտակ Պետրոսյանը:

Փետրվարի 15-ին Կունյայի պատմամշակութային արգելոց թանգարանի ցուցասրահում ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կատարողները մասնակցեցին «Հավերժի վավե-

րագրողները. Արամ, Արա, Արտաշես Վրույրներ» խորագրով ժամանակավոր ցուցադրության բացմանը, որը կազմակերպվել էր Ե. Չաբենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի և Հայաստանի պատմության թանգարանի հետ համատեղ:



ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կատարողները Կունյայի պատմամշակութային արգելոց թանգարանի ցուցասրահում

Շ Ն Ո Ր Յ Ա Վ Ո Ր ՈՒ Մ Ե Ն Ք

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ուսանող Նախշուն Սուրաբյանին (դասախոս Աննա Եղոյան), Փարիզում կայացած միջազգային մրցույթում Առաջին մրցանակի արժանանալու առթիվ: ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ուսանողուհի Հեղինե Խաչատրյանին և ղոցենտ Մարինե Խաչատրյանին, 2023թ. ԵՊԿ նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ «Արամ Խաչատրյան 120» նախագծի մաս կազմող ձայնասկավառակում ընդգրկվելու առթիվ:

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅԹՅԱՆԸ

ԼՈՍԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱՎԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱՎԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԾԻ ԿԱՏԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
Վկայական N 03U059505 տրված 7.04.2003թ.  
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ  
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՅԱՆ, ԳՈՐԱՐ ՇԱԳՈՅԱՆ  
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱՅԹՅԱՆ  
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՐԱՐ ՇԱԳՈՅԱՆ  
Խմբագիրներ՝ ԳՈՐԱՐ ՇԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)  
ՍՈՖԱ ԱԶՆԱՌԻՅԱՆ (ռուս. լեզու)  
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՐԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտասվումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:  
Շավաղը 10 էջ: Ստորագրված է 25.02.2024:  
Գինը 200 դրամ: Տպագրանակը՝ 101:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.  
0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2  
+374 10 52 39 93+118  
+ 374 55 00 21 62  
http://www.conservatory.am,  
E-mail: yerazhisht@gmail.com  
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-  
Yerevan-State-Conservatory-996490150508214/

